№ 9—12 (242) XXIV ՏԱՐԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ 1914

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENEVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՆԻԿՕԼ-ԴՈՒՄԱՆ

Մի դագաղ ևս — դէպի Հայութեան սրբատաճարը։ Մի շիրիմ ևս—ժողովրդական ջերմաբուխ արցունքներով ցօղուած, հարիւր հազարների գուրգուրանքով շրջապատուած։ Նիկօլ Դուման... Հին օրերի նիբրական անուններից է, այն անդրանիկ պլէադից, որ գնացել էր բռնակալութեան և սարկութեան շամբուտների մէջ ճանապարհ հարթելու գալոց ըմբոստ սերունդների համար։ Երկա՞ր է իր անցած ճանապարհն ևս — անհունօրէն, դաժանօրէն երկար։ Թաւրիզ, Դերիկ, Բօղազ-Քեսասան, Խանասոր, Բաքու, Նորէն Վասպուրական, Երևան, Նորէն Թաւրիզ — այդ ճանապարհի հանգրուաններն են, այդ հոյակապ կեանքի սրտառուչ դրուագները։ Հերոսը կանգ էր առնում յամեն մի ծանր ու տանջալի ճիգից յետոյ, նիրհում էր „օրինական", կուլտուրական աշխատանքի, յոգնում էր, տաղտկանում և առաջին առիթով իսկ գրկում էր վերստին հրացանը, շտկում էր կորացած իրանը, որսորդի սուր ու թափանցող աչքերով հայում էր հորիզօնը և նետւում էր յորձանքի մէջ, պաղ, ստոյիկեան վճռականութեամբ ու արիութեամբ։

Վճռականութիւնը, անսասան կամքը, որոշումների պաղ ու անյողդողդ կատարումը, կուսակցական պողպատեայ դիսցիպլինը — անհրաժեշտ գծեր են ամեն մի կուսում, ևս առաւել հայոց դաժան յեղափոխական պայքարի մէջ։ Այդ գծերի անձնաւորումն էր զարաքաղցի հերոսը և նրանց համար պատրաստ էր նա ամեն վայրկեան իր կեանքը զոհաբերելու։ Բարոյական ամենաբարձր սկզբունքներն իւրացրած և կուսակցութեան անաղարտ դրօշակի նախանձախնդիր՝ նա մարմնացած վեհանձնութիւն էր դէպի թոյլն ու անպաշտպանը, — անգամ թշնամի բանակի մէջ—բայց և անհաշտ ու անընկճելի էր, երբ պէտք էր պատժել յանցաւորին, լինէր դա մի թշնամի կամ ցեղակից, մի դաւաճան, մի մատնիչ, կամ թէկուզ կուսակցական դիսցիպլինի դէմ մեղանչող մի անհատ։

Դուման

ԽԱՆԱՍՕՐԻ ԱՐՇԱՒԱԽՄԲԻՑ

Խանասորի արշաւանքի միջոցին նրա ձայնն էր, որ հնչում էր կտրուկ ու զօրաւոր։

— „Տղե՛րք-ջան, կանանց ու երեխաներին մի՛ ձեռք տաք, բայց տղամարդկանց անխնայ ժորթոտեցէք“։

*

Հայ-թաթարական կռիւների մէջ ենք։ Քրդերի սարսափ—Դուսանը այժմ թուրքերի սարսափն էր... „Դաշնակցութեան“ ընդհանուր հրամանատարի պաշտօնում, Երևանեան նահանգի մէջ։ Քաղաքում և շրջակայքում հայերը յաղթող են։ Անարգ հակառակորդը չհամարձակուելով փորձել իր ուժը բացարձակ կռուի մէջ, սկսում է գաղտնի տերրորների մի անվերջ շարան։ Ամեն օր այս կամ այն այգու կամ փողոցի մէջ անհետանում է այս կամ այն հայը։ Ինչպէ՞ս հակազդել։ Նիկոլի համար վարանում չկայ։ Պէտք է ամեն գնով վերջ տալ այդ ճարակող անհատական սպանութիւններին։ Եւ նա հրամայում է. իւրաքանչիւր անհետացած հայի փոխարէն՝ անհետացնել 3 — 4 թաթար։ Մոլտկէի հրամանները աւելի ճշգրիտ ու երկիւղածութեամբ չէին կատարուում, քան Նիկոլինը։ Դաշնակցութեան տերրորիստները սկսեցին մեթոդով ի կատար ածել իրենց ռազմական առաջնորդի հրամանը, „ակն ընդ ականը“ — անսիրտ, բայց փրկարար—գործեց ահաւոր հետևողականութեամբ և կարճ ժամանակում, Նիկոլի այդ դաժան strategème-ի շնորհիւ, թշնամին խոնարհուեց, սպանութիւնների համաճարակը վերացաւ, հայ ժողովուրդը շունչ առաւ։

*

Անողորմ դէպի վատերը — նաև սեփական շարքերի մէջ։ Նոյն թաթարական ընդհարումների շրջանում ենք։ Մի օր—սիրային թէ այլ խնդրի առիթով—զինուորներից մինը հետապնդում է ու սպանում իր ընկերոջ։ Երկուսն էլ Դաշնակցութեան զինուորներ... Հրամանատարը չի կարող հանդուրժել մի այդպիսի արարք, որ դաւաճանութեան համահաւասար էր։ Նա հրամայում է հրացանի բռնել յանցաւորին։ Ոչ մի աղաչանք չի օգնում այլ և առ։ Դաշնակցական կարգապահութիւնն ու բարոյականութիւնը ոտնահարել են ամենաբիրտ կերպով։ Ցանցագործը պէտք է քաւէ... Եւ մի օր նա կապուում է ծառի բնին ու գնդակահարուում ամբողջ բանակի ներկայութեամբ... յօրինակ այլոց։

*

Կազմակերպութեան պրեստիժը—ամեն բանից վեր։

Նիկոլը Թիֆլիս է։ 1906-ն է. թաթարական խլրտումները դադարել են արդէն։ Անդորրացումն է, էլ չկան խօլական ձիարշաւները, ոչ էլ „ստորերկրեայ“ դաւադրական ժեստերը։ Քաջի իրանը վերստին կորացել է, քայլուածքը դանդաղել, բայց սիրուն աչքերը շարունակում են կայծակել։ „Ինտելիգենտ“ աշխատաւոր է այժմ, մասնակցում է վարիչ մարմինների գործունէութեան, տալիս է միշտ իր իմաստալի խորհուրդները, խօսում է սակաւ, միշտ տեղին, միշտ խելացի, խօսում է սքանչելի տրամաբանութեամբ, հաղորդում է փայլ ու ջերմութիւն ընկերական հաւաքոյթներին։ Եւ մի օր, պատահմամբ, ընկերներից մինը գալիս է ու յայտնում, որ այս ինչ մարմինը մահւան սպառնալիքով խոշոր գումար է պահանջում մի անհատից, որ „Դաշնակցութեան“ օժանդակող է և նրա պաշտպանութեան ներքոյ։ Սպառնացողը մի խմբակ էր, որ հրապարակ էր եկել այդ պատմական օրերին „օգտագործելու“ Դաշնակցութեան ստեղծած տրամադրութիւնները։ Պատուի խնդիր էր Դաշնակցութեան համար և միւս կողմից էլ՝ հարկ էր, վերջապէս, սահման դնել այդ սիստեմատիկ „օգտագործումներին“, որոնք գնում էին սնուցանելու մի անօգուտ ու գերազանցապէս պարազիտ գոյութիւն։ Նիկոլ անմիջապէս ոտքի է. „տա՛ր ինձ այնտեղ, ուր նշանակուած է ժամադրութիւն սպառնացող դրամաշորթների հետ“։ Եւ քիչ յետոյ Դուսանի սպառնալիքն է հնչում X...ի գրասենեակի մէջ, ուր յիշատակուած „մարմինը“ ղրկել էր իր պատգամաւորը՝ դրամը գանձելու համար։

„Գնացէ՛ք ասացէք ձեզ ղրկողներին, որ հանգիստ թողնեն այս մարդուն, հակառակ դէպքում ձեր ամբողջ կենտրոնական կոմիտէն կեանքով պատասխանատու է իմ առջև։ Ասացէք, որ սպառնացողը Նիկոլն է“։

Դժուար թէ կուսակցական նախանձախնդրութիւնը—անձնազոհութեան բնազդը յանուն մի մեծ կազմակերպութեան պատուի ու հմայքի—դժուար թէ նա երբևիցէ աւելի ուժեղ արտայայտուած լինի մի գաղափարական անհատի մէջ։ Սպառնալիքը այնքա՞ն էր վճռական, խօսելու տոնը այնպէ՞ս կտրուկ ու համոզիչ... Նիկոլի սովորական տոնն էր այդ. լսողը զգում էր, որ այդ մարդը պատրաստ է իրօք իր անձը դնել քարէզի վրայ յանուն այս կամ այն սկզբունքի. նա սպառնացող և իրագործող էր. այդ լաւ գիտէին հակառակորդներն ու բարեկամները, և ի՞նչ ասել կուզէ, սպառնացող „մարմինը“ համակերպեց։

*

Ինչքա՞ն վեհութիւն կայ այն պատմական—թեկուզ և տխուր — վայրկեանի մէջ, երբ (1905-ի փետրուարին) Բաքուի փողոցներում, թաթարական գազանացած խուժանի դէմ նա մեն-մենակ ելաւ հրացանը ձեռին, փողոց-փողոց, կտուրէ-կտուր, դարանից-դարան, թափօրելով ու գնդակահարելով։ Այո, մեն-մենակ... Դաւադիր ոստիկանութիւնը շղթայ էր կապել ամենուրեք և ահագին դժուարութիւններով էր, որ ընկերների մի քանի խմբեր Բալախանիից ու Սև Քաղաքից եկան միացան խմբապետին։ Նրանց յարձակման թափը և գետնին փռած հարիւրաւոր թուրք դիակները վայրկենաբար շշմեցրին հակառակորդին և ստիպեցին նրան դիմել խաղաղութեան բանակցութիւնների...

Բաքուն խաղաղուեց... մինչև մի նոր պրովոկասիոն. և ահագին քաղաքի մէջ խմբապետի մինչ այն գրեթէ անյայտ անունը մէկէն ի մէկ շրջան առաւ և ամենքը

խոստովանեցին, որ Նիկոլը իր անձնական ու վճռական նախաձեռնութեամբ „փրկեց Բաքուն“։ Առաջին անգամն էր կովկասեան գոռոզ թուրքութիւնը գլուխ խոնարհեցնում մինչ այն արհամարհած հայութեան առջև...

*

Կոպենհագ ենք։ Նիկոլը „Ինտերնացիոնալի“ ժամադրավայրում։ Ճաշակ չուներ ընկերվարական խնդիրների համար. չէր զբաղւում նրանցով և շատ քիչ էր հետաքրքրւում։ Բայց քանի որ պատահաբար ծրնեվ էր, ուզեց տեսնել Միջազգային Համագումարը։ 1910-ի օգոստոսին Կոպենհագ ենք։ Ինտերնացիոնալի ամենատպաւորիչ կոնգրէսներից մէկն էր։ Հարիւր հազար սոցիալիստ գործաւորներ անցնում էին հսկայական թափորով Դանիայի մայրաքաղաքի փողոցներով և քիչ յետոյ սոցիալիզմի աշխարհահռչակ հռետորները ճառում են լայնածաւալ պարտէզի մէջ, այլ և այլ ամբիոններից, նոյն հսկայ բազմութեան առջև։ Հայդուկապետը լուռ ու խորունկ յուզմունքով դիտում է իր աչքին խորթ ու դիւթական այդ տեսարանը, ծանօթանում է Ժորէսի ու այլ սոցիալիստ գործիչների հետ և ի վերջոյ, մի առանձին նիստի մէջ, ուր հաւաքւած էին ս.-դ.-ական, լեհական, ֆինլանդական ու այլ բազմաթիւ պատգամաւորները, խօսք է առնում իր Կուսակցութեան անունից, և նոյն հակիրճ ու վճռական բառերով ծանուցանում է նրա գալոց թատերամուրը.

Նիկոլ-Դուման

„Մենք այսօր ցիր ու ցան ենք, ընկերները. մեծ մասամբ փախած, ապաստանած են այս կամ այն պետութեան սահմաններում, բայց հէնց որ ժամը կը հնչէ, մենք վերստին կը փողհարենք, կը թմբկահարենք — Դաշնակցութեան լեգէօնը անմիջապէս կը հաւաքւի, կուռ ու պատրաստ և կ'աբշաւէ թշնամու դէմ“...

Հին ռազմիկի խօսքն ու դէմքը ընդհանուր հետաքրքրութիւն են յարուցանում, ամենքը սիրով ծանօթանում ու զրուցում են հետը, մի քանիսը խնդրում են պատմել իր ռազմական արկածները, ուրիշները առաջարկում են գրաւոր զեկուցում տալ հայդուկային տակտիկայի մասին Հայաստանում...

*

Ժամը հնչեց... Հինաւուրց կաղնին նորէն ահա տատանուեց հողմի գոռ հարւածներից, „Դաշնակցութեան“ լեգէօնները ասես յանկարծ լոյս ընկան գետնի տակից և կուռ ու կազմ նետուեցին աւանդական թշնամու դէմ. Անդրանիկ, Դրօ, Խէջօ և ուրիշ նուիրական անուններ մի անգամ ևս հոլովեցին ու անցան բերնէ բերան. բայց հէնց այդ գոռ, պատմական վայրկեանին լռեց ընդմիշտ Կոպենհագի մարգարէի ձայնը, կտրուեց նրա բուռն, հարուստ, արկածալի կեանքի թելը։ Թանկագի՜ն կեանք՝ որ դեռ այնքան պէտք էր մեզ իր ահագին փորձառութեամբ և իր ջինջ գաղափարային մաքրութեամբ...

Նիկոլ, Դուման... Անուններ կան, որ մի մի դրօշակ են։ „Դաշնակցութեան“, հայ ժողովրդի ներկայ ու գալոց սերունդները պատկառանքով կը խոնարհւին նաև այս մեծ շիրմի առջև, որ կը դրւի Քրիստափորների ու Սիմոնների կողքին։ Հայկական ազատամարտի առաջին ծիծեռնակներն են դրանք, յեղափոխական կազմակերպութեան անդրանիկ ու բազմերախտ սերունդը։ Նրանց ձեռքով չ'ազատագրուեց հայրենիքը բռնութեան ճիրաններից, բայց նրանց ձեռքով սրբուեց ընդմիշտ հայի ճակատից ստրկութեան ժանգն ու մուրը, նրանց առնական, գաղափարական ճիգերով ստեղծագործուեց Նոր Հայութիւնը։ Պատի՜ւ նրանց, փա՜ռք նրանց։

ԳԱԼՈՒՍՏ ԱԼՈՅԵԱՆ

Բայազէդում վերջերս նահատակւած Գալուստ Ալոյեանը պատկանում էր մեր իսկական վետերանների շարքին։ Յեղափոխական ասպարէզին նա նուիրւեց դեռ 1883—1894 թուականներին։ Ամբողջ 30 տարի. ուրեմն, նա ապրեց այդ կեանքով։

Այդ երեք տասնեակ տարիների ընթացքում նա և պրոպագանդիստ էր, և կազմակերպող. գրում էր թերթերում, վարում էր կազմակերպութեան ընթացիկ գոր-

ծերը։ Երբեմն նա Պարսկաստան էր, երբեմն Կովկաս՝ երբեմն Հիւսիսում, երբեմն Թիւրքիա։ Աւելի անձնատուր էր լինում կազմակերպական ընդհանուր գործին յեղափոխութեան նեղ օրերին, երբ հրապարակի վրայ շատ քիչերն էին մնում։ Բացառիկ եղաւ նրա գործունէութիւնը մանաւանդ հայ-թաթարական կռիւների ժամանակ։ Երևանեան նահանգը չի մոռանայ նրան երբէք։

Բայց Գալուստի ընդհանուր գործունէութեան վրայ չէ, որ ուզում ենք ծանրանալ այսօր։ Նա ունէր կազմակերպութեան մէջ և ուրիշ, իրեն յատուկ դիրքը,— նա զինագործ վարպետ էր. դա էր նրա գործունէութեան հիմքը։



Գալուստ Ալոյեան

Դեռ 80-ական թուականների սկզբին՝ մեր արդի վերածնութեան նախօրեակին, մինչ երիտասարդութեան մի մասը տարուում էր գրական աշխատանքով, մինչ միւսները կազմում էին խմբակներ՝ ժողովրդի համար գործիչներ կամ գործիչներին միջոցներ հայթայթելու նպատակով. մինչ աւելի հասունացածները, առաքելի ցուպն առած՝ Ցաճկահայաստան էին դիմում, Գալուստը, 2—3 ուրիշ երիտասարդների հետ միասին, որոշեցին նուիրուել այն ճիւղին, որ յեղափոխական գործունէութեան նոյնքան կարևոր ջիղն է կազմում։

Դեռ 30 տարի առաջ նրանք զգացին, որ մեր խեղճ իրականութեան մէջ, մեր բոլոր ձգտումները կը խորտակուէին, եթէ հայ ժողովուրդը դուրս չբերէր իր ծոցից մարտիկ ուժեր, և եթէ մարտիկների ձեռքը չարուէին նորագոյն, կատարելագործուած զէնքեր։ Եւ ոչ միայն զգացին, այլ և դիմեցին գործնական քայլերի։

Միջնակարգ դպրոցը թողած, երիտասարդները իրենց քայլերը ուղղեցին Հիւսիս։ Ձինտուեցին նրանք բարեբարներ, գնացին իրենց միջոցներով և յաջողեցան մտնել Տուլայի պետական զինագործարանը, իբրև հասարակ բանուորներ։

Ինչպէս ասացինք, 3—4 հոգի էին նրանք։ Գործի ամբողջութեան համար արդէն այդքանը բաւարար էր։ Մէկը պիտի դառնար մասնագէտ առաւելապէս հրացանի փողի, միւսը փականի, մի ուրիշը պէտք է ընդհանուր ծանօթութիւններ ձեռք բերէր զէնքերի բոլոր մասերի վերաբերեալ։ Նրանք դասաւորուեցին այսպիսով զինագործարանի համապատասխան բաժանմունքներում։ Գալուստը ընտրել էր փողի բաժանմունքը։

Չորս տարի շարունակ աշխատեցին գործարանում։ 1888—1889 թ. արդէն պատրաստ էին և տրամադրելի գործի համար։ Հէնց այդ ժամանակն էր, երբ հասունանում էր Կովկասում և այլ վայրերում ցրուած առանձին առանձին խմբակների միանալու, դաշնակցելու, մի մեծ կուսակցութիւն կազմելու միտքը։ Մինչ այդ, երիտասարդ զինագործներին առաջին ձեռք մեկնողը եղաւ Պետերբուրգի հայ ուսանողութիւնը և քիչ յետոյ Մոսկվայի ուսանողութիւնը, որը շտապեց ձեռնարկի օգտին մի խոշոր ներկայացում յաջողեցնել։

1890 թ. արդէն կազմուած էր Հ. Յ. Դաշնակցութիւնը։ Նրա առաջին քայլերից մէկը եղաւ զինագործարանի հաստատումը։ Դժբախտաբար, զինագործներից մէկը՝ եթէ չենք սխալուում Միքայէլ անունով, բոլոր իր ընկերների կարծիքով՝ ամենակարևորը, նա, որ խմբակի հոգին էր, չկար այլ ևս։ Զինագործարանից դուրս գալու տարին զոհ էր գնացել հիւանդութեան։ Միւսները կպան գործի, հրաւիրելով, իբրև օգնական, մի ռուս վարպետ, որին մտերմացել էին Տուլայում։

Առաջին արհեստանոցը հիմնուեց Թիֆլիսում Ալէքսանդրեան այգուց դէպի Վանքը տանող փողոցի անկիւնում։ Քիչ յետոյ, երբ Դաշնակցութիւնից զատուեց այսպէս կոչուած „Ֆրակցիան“, վերջինիս նախաձեռնութեամբ երկրորդ արհեստանոցը հաստատուեց Ատրպատականում։ Վարպետներից երկուսը՝ Ա. Ք.-ը և Եփ.-ը այնտեղ գնացին, հետներն առնելով երիտասարդ փականագործ Բ.-ին։ Թիֆլիսում մնաց Գալուստը, արհեստանոց մտած երիտասարդ աշակերտների հետ միասին։

Թիֆլիսի արհեստանոցը ստիպուած եղաւ գործել գաղտնի։ Նա իր գոյութիւնը պահպանեց մինչև 1903 թ., երբ դիպուածի բերմամբ ցացուեց ոստիկանութեան կողմից և գրաւուեց մեծաքանակ հրացանների և մասերի հետ միատեղ։

Ատրպատականի արհեստանոցը աւելի յարատև և

կանոնաւոր կեանք ունեցաւ։ Նա գործում էր մինչև վերջին տարիները. որոշ ժամանակ Գալուստն էլ էր աշխատում այնտեղ։

Թերութիւններ կային, ի հարկէ։ Ժամանակին գանգատներ, տրտունջներ լսւում էին վարպետների շուրջը։ Մի երկուսը շուտով հեռացան ասպարէզից, բայց նրանց տեղը ուրիշները բռնեցին և թէ որքան մեծ էր դրանց խաղացած դերը, այդ կարող են ըմբռնել նրանք, որոնք մօտիկից հետևել են կուսակցութեան զինական կեանքին։

Մի ամբողջ, եթէ կարելի է այսպէս ասել, դպրոց էր հիմնւել։ Աշակերտները, վարժւելով առաջին վարպետների ձեռքի տակ, թանկագին օժանդակներ էին հանդիսանում։ Թէ Կովկասում և թէ Ատրպատականում, պահանջի համեմատ այս կամ այն կէտերում հաստատւում էին ճիւղեր։

Եթէ Դաշնակցութիւնը աչքի ընկաւ միւս հայ և ոչ-հայ կուսակցութիւնների շարքում, իբրև ռազմօրէն լաւ պատրաստւած մի կուսակցութիւն, դրա հիմնական պատճառներից մէկը պէտք է փնտռել նրա տեխնիքական պատրաստութիւնների մէջ, որին դիմել էր նա իր գոյութեան առաջին օրից։

Թիֆլիսի արհեստանոցն էր, որ առաջին անգամ հայթայթեց Դաշնակցութեանը առաջին կանոնաւոր բերդան հրացանները։ Առանց դրան՝ կազմակերպութիւնը ստիպւած պիտի լիներ գոհանալ գաղտնի զինավաճառների ձեռքով տարածւող մեծ մասամբ կասկածելի, կեղծ, փճացած բերդաններով, որոնք վտանգաւոր էին ամենից առաջ գործածողի համար։ Անկարելի էր հանգիստ խղճով դնել նրանց կուռողների ձեռքը, կամ մարդկային զոհեր տալով՝ փոխադրել երկիր։ Արհեստանոցից դուրս եկածները շինւած էին խնամքով, բոլորն էլ փորձի ենթարկւած։ Գալուստը ինքը ներկայ էր լինում փորձերին՝ անձամբ ծանօթանալու համար իւրաքանչիւր հրացանի ամենափոքր թերութիւններին։

Գալուստի, ինչպէս նաև միւս ընկերների կարևորութիւնը ոչ միայն նրա մէջն էր, որ վարպետ էին։ Ոչ նուազ դեր էին խաղում այն կապերը, որ հաստատել էին նրանք Ցուլայում զինագործարանի այլ և այլ բաժանմունքների կառավարիչների հետ։ Սրանց շնորհիւ հնարաւորութիւն էր ստեղծւել ձեռք բերել պատրաստի մասեր՝ փող, փական և այլն և արհեստանոցում նրանցից „հաւաքել", կազմել ամբողջական հրացաններ։ Նոյն կապերի շնորհիւ էր դարձեալ, որ յաջողւում էր դուրս հանել բոլորովին պատրաստի զէնքեր, նոյնքան մաքուր, ընտիր, որքան պետականները։

Ընկերներից շատ քչերը գիտեն թերևս, որ մեր նշանաւոր մօսինները՝ այդ գերազանցապէս դաշնակցական հրացանները մուտք գործեցին մեր մէջ Գալուստի ջանքերով։ 1892 թ. էր։ Ցուլայից գալով՝ նա բերել էր հետը Թիֆլիս 2 հատ։ Պատմում էր հիացմունքով նոր հրացանի առաւելութիւնների մասին. ընկերները դժւարութեամբ էին հաւատում,—Գալուստը համարում էր

Ալոյեան

ԽԱՆԱՍՕՐԻ ԱՐՇԱՌԱԽՄԲԻՑ

մեր շրջանում ոգևորող, չափազանցնող։ Տարան քաղաքից դուրս փորձի՝ և ընկերները չհաւատացին իրենց աչքին։ Մէկը ընծայ էր Ցունոյի համար, միւսը ուղարկուեց Պարսկաստան։ Այս երկրորդը 93 թ. Դերիկի նշանաւոր կռուում Վարդանի ձեռքին էր գործում։

Ոչ ոք այնքան պահպանողական չէ զէնքի վերաբերեալ, որքան մարտիկը, բայց Դերիկի կռուից յետոյ մեր հայդուկները աչքից սկսեցին ձգել իրենց սիրած բերդանները և մօսին փնտռել։

Հետևեալ տարին արդէն 800 մօսինների մասեր գնուած և բերուած էին Թիֆլիս։

Մօսինները միանգամից բարձրացրին մեր մարտական խմբերը։ Թէ 1895—1896 թ. ինքնապաշտպանութեան կռիւներում, թէ Խանասորի յայտնի արշաւանքի մէջ, թէ յետագայ բոլոր ընդհարումների մէջ, վճռական դերը կատարում էին մօսինները։

Զպէտք է մոռանալ, որ այդ ժամանակները ոչ միայն քրդերի, այլ և Թիւրքք կանոնաւոր զօրքի ձեռքին չկային մօսինի նման արագաձիգ և հեռաձիգ հրացաններ՝ անծուխ վառոդով։

Ինքը՝ ռուսական բանակը սկսեց զինուել մօսիններով միայն 96 թ.-ին, այսինքն Դաշնակցութիւնից չորս տարի յետոյ։ Զարմանալի չէ, որ երբ ռուս պաշտօնեաների ձեռքն էր ընկնում մօսին, հաւատացած պատմում էին, թէ հայերը զինուած են անգլիական հրացաններով։

Դաշնակցութեան հալածանքի տարին՝ 1908 թուականին, ռուս ոստիկանութիւնը մտնում է և Գալուստի տունը Երևանում։ Գալուստը բացակայ է լինում. եղելութեանը կատարելապէս անտեղեակ, երբ նա տուն է վերադառնում, դրան մօտ նրա առաջը կտրում է ոստիկանը և նրան օտարի տեղ ընդունելով՝ թոյլ չի տալիս ներս մտնել։ Գալուստը օգտւում է ոստիկանի միամտութիւնից, երեսը դարձնում է, գնում է ուրիշ տեղ պահւում և ապա ապաստանում Պարսկաստան։

Ճիշտ պարսկական սահմանադրական կռիւների տաք շրջանն էր։ Հայերը ցոյց էին տալիս ամենաջերմ մասնակցութիւն։ Գալուստը անհրաժեշտ էր, և նա սկսեց գործել այդտեղ։

Թաւրիզի կռւից յետոյ, պարսիկ յեղափոխականների ու ռուս զօրքերի միջև, միւս մեր ընկերների նման Գալուստն էլ անցաւ Թիւրքիա։ Այնտեղ էլ նա շարունակ զէնքի վերաբերեալ գործերով էր զբաղւած։

Գալուստը բնաւորութեամբ չափազանց մեղմ էր, բարի։ Ոգևորւող էր, և ինչպէս քիչ վերը նկատեցինք, երբեմն չափազանցնող ու իր չափազանցութիւններին անկեղծ հաւատացող։ Ընկերասէր էր շատ, լի զգացմունքով։ Նրան է պատկանում „Կարկուտ տեղաց Խանասորի դաշտումը“ յայտնի երգը։

Զնայած որ 50 տարին անցել էր, նա պահել էր դեռ իր մէջ շատ մանկական գծեր։

Ինչպէս արդէն գիտեն ընթերցողները, նա սպանուեց Բայազէդում, անյայտ չարագործների ձեռքով, այն օրը, երբ պատրաստւում էր կովկաս անցնել։

Այսպէս ընկաւ մէկը մեր այն հին ընկերներից, որոնք տասնեակ տարիների ընթացքում հոգեկան ոյժ են ունեցել ապրելու կազմակերպական կեանքով. մէկը նրանցից, որոնք չեն մտել արդէն հարթւած ճանապարհի մէջ, այլ իրենք են պատրաստել և հարթել որոշ հոսանք. մէկը նրանցից, որոնք դաշնակցական էին նախ քան Դաշնակցութիւնը։

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գերմանիայի, աւելի ճիշտ, պրուսական կիսաֆէոդալ բռնապետութեան վրայ է ծանրանում պատասխանատուութիւնը այն անօրինակ կատաստրոֆի, որ պայթեց քաղաքակիրթ մարդկութեան վրայ և որ ահա հինգ ամսից ի վեր ճարակում է մեր շուրջը, կլանելով միլիոնաւոր երիտասարդ ուժեր, աւերելով տնտեսութիւն ու մշակոյթ, կործանելով արևելեան բազմադարեայ կոթողներ և ողբի ու յուսահատութեան բառաչը տարածելով վիթխարի, պատմութեան մէջ չտեսնւած, մարդկային սպանդանոցում։

Եթէ կար այդ մասին տարակոյսի մի ստւեր, այն էլ այժմ չքացաւ իտալական պարլամենտի անակնկալ մերկացումով։ Աւստրիան, անկարող ու անճարակ Բերխտոլդի կառավարութիւնը, վաղուց էր որոշել զբաղեցնել Սերբիային, և սերբական դիակների վրայից արշաւելու դէպի Սալոնիկ։ Նա գիտէր, որ այդ քայլը պիտի յարուցանէր համաեւրոպական պատերազմ, քանի որ Ռուսաստանը չպիտի թոյլ տար բալկանեան սլավոնութեան յոշոտումը պանգերմանիզմի ձեռքով... Նա գիտէր այդ— և 1913-ի օգոստոսին, երբ պատրաստւում էր շղթայազերծել փոթորիկը, յարձակւելով Սերբիայի վրայ, հարկ էր սեպում գիմումն անել իր դաշնակից Իտալիային՝ իմանալու նրա բռնելիք դիրքը գալոց ընդհանուր վերիվայրումի մէջ։

Աւստրիան, Հաբսբուրգեան զառամեալ ու խարխուլ միապետութիւնը, ներքուստ հիւանդ, անդամալոյծ՝ ազգերի ամենաբուռն հակամարտութեամբ, Աւստրիան, որի ազգաբնակութեան մեծամասնութիւնը գերմանատեաց սլավոններ են — չէր կարող, հարկաւ, այդքան խիզախ ծրագիրներ որոճալ, եթէ չունենար թեև ու թիկունք յանձին իր հզօր դաշնակցի—Գերմանիայի։ Իրօք այնտեղ, Գերմանիայում էր, որ յղացւում էր մեծ

Հարուածը։ Այնտեղ, Բերլինում էր, Վիլհելմի, թագաժառանգի, Մոլտկեեան գոռոզ սպայակոյտի, պրուսական բիրտ, աւարատենչ ֆէօդալիզմի միջավայրումն էր, որ տարիներից ի վեր ծրագրում էին յեղաշրջել Եւրոպայի, աշխարհի քարտէզը, խլել Ֆրանսիայից նրա լաւագոյն գաղութները, խլել Անգլիայից նրա ծովային, համաշխարհային տիրապետութիւնը, հարուածել Ռուսաստանին, յափշտակել Լեհաստանն ու Մերձ-Բալտեան նահանգները, դառնալ գերագոյն Իրաւարարը ամբողջ երկրագնդի վրայ, ենթարկել աշխարհը գերմանական հեգեմոնիային..

Նապոլէոնեան աշխարհակալութեան այդ սիստեմատիկ ծրագիրը այսօր արդէն ծանուցւում է վրդովեցուցիչ ցինիզմով գերման մտքի ամենափայլուն ներկայացուցիչների, Հէկկելների ու Օսվալդների բերնով... „Գերմանիան ամենահզօր, ամենաառաջադէմ պետութիւնն է, գերմանացիք ամենախելօք, ամենահանճարեղ, ամենաաշխատասէր և ամենամարդասէր ցեղն են, ամենաբարձրը իրենց արուեստով ու ճարտարարուեստով, ամենահզօրը իրենց գիտութեամբ ու փիլիսոփայութեամբ, իրենց զինուորական ու քաղաքական կազմակերպութեամբ—և հետևապէս... նրանք պէտք է իշխեն մարդկութեան վրայ, պէտք է խլեն առաջնութեան արմատներին տիեզերական մրցման կրկէսում, պէտք է թելադրեն իրենց օրէնքը բոլոր ազգերին“... Այդպէս է մտածում անկեղծօրէն գրեթէ ամեն մի գերմանացի, այդ ոգով, այդ ուղղութեամբ են կրթւել, դաստիարակւել սերունդները 1870-ի յաղթական պատերազմից ի վեր, շնորհիւ այն յատուկ դաստիարակչական մեթոդի, որ մայրել է պրուսական տարամերժ բիւրոկրատիզմը ամենուրեք, դպրոցներում ու հանրային այլևայլ հաստատութիւնների մէջ..

Կառավարութիւն և ժողովուրդ—գրեթէ բացարձակապէս համերաշխ են այդ գաղափարի մէջ. ամենքն էլ մինչև ուղ ու ծուծ տոգորուած են իրենց ազգային գերազանցութեան այդ հաւատամքով և գուցէ չէր սխալւում Ծերունի Վայեանը, երբ նա Ֆրանսիայի սոցիալիստական օրգանի մէջ ազդարարում էր—խախտելով ընկերվարութեան ամենախոշոր աւանդութիւններից մինը — թէ „Կայզէրն ու իր ժողովուրդը արժանի են միմեանց“...

Այո, կոյր, տարամերժ շովինիզմի տենդը համակել է ամբողջ Գերմանիան, ոչ միայն Վունտի ու Հաուպտմանի, գրողների ու պրոֆէսորների Գերմանիան, որ իր անարժանութեան լիակատար ապացոյցը տուեց քիչ առաջ հրատարակուած մանիֆէստով (մի մանիֆէստ՝ որ արդարացնում էր Բելգիայի չեզոքութեան խախտումը, պատերազմի պատճառ էր հռչակում Ռուսաստանն ու Ֆրանսիան և խունկ էր ծխում գերմանական միլիտարիզմին)—շովինիզմի տենդը համակել է և Սոցիալ-դեմոկրատիայի լայնածաւալ շարքերն էլ։ Թո՛ղ էր, ողորմելի էր նրա „բողոքը“ պատմութեան մեծագոյն ոճրի դէմ, որ հեղինակում էր պաշտօնական Գերմանիան. դժգո՞ն ու երկչոտ մնաց Vorwärts-ի դիրքը սկզբից ի վեր, Գերմանիայի ամենահզօր կուսակցութիւնը, որ երեք միլիոն ընտրողներ ունի և 111 պատգամաւորներ Ռայխստագի մէջ, ասես մէկէն ի մէկ ջնջեց իր գաղափարական, սոցիալիստական կերպարանքը, նա ոչ միայն քուէարկեց պատերազմական բիւջէն, ոչ միայն մասնակցեց խանդավառ „ուռռա““ներին ու ցոյցերին ի պատիւ թագաւորի, այլ և մի խօսք չգտաւ խարանելու բարբարոս արշաւանքը փոքրիկ Բելգիայի դէմ և... ի լրումն ամենայնի, ղրկեց պատուիրակութիւն Իտալիա՝ համոզելու այնտեղի սոցիալիստներին, որ Գերմանիայի դատը արդարագոյնն է և որ հարկ է օժանդակել նրան...

Մենք միշտ էլ թերահաւատ ենք եղել այդ ահագին կուսակցութեան ներքին յեղափոխական կորովի մասին, այժմ դէպքերը գալիս են կատարելապէս հիասթափեցնելու և լաւատեսներին, գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ամենաջերմ երկրպագուներին, որպիսիք են Ժիլ Գեդ, Պլէխանով և բազմաթիւ ուրիշներ։ Ո՞ւր ես Ժօռէս... Ամստերդամի Համաժողովի ամբիոնից — 1904-ին — նա գրեթէ մեն-մինակ էր, որ մաքնչում էր քարացած դօքտրինեօրների աւանդական կուրութեան դէմ, բողոքում էր յուսահատ՝ մարքսիստական գոռոզ քուրմերի դէմ, որ յանձին Բէբէլի ու Ժիլ Գեդի հեգնում էին ու ջախջախում ռէվիզիոնիզմն ու „Ժօռէսեան օպպորտիունիզմը“, անաթեմայի ենթարկում ամենամեծ և ամենազգաստ Սոցիալիստին, հռչակելով „ուղղադաւան“ սոցիալ-դեմոկրատիզմի ամրակուռ դիսցիպլինը, նրա փրկարար տաքտիկը, յեղափոխական պարունակութիւնը, արմատական ոգին... Ա՞ղբ էր... Եւ այսօր ահա համաշխարհային սոցիալիզմի երախտաւոր վեսերանը, Ծերունի Վայեան, ողբում է ցաւագին պատրանքը, ողբում է այդ ահագին կազմակերպութեան անանկութիւնը և միևնոյն անարգական տախտակի վրայ դնում Վիլհելմ կայսրին ու ս.-դ.-ական լեգէոններին... Ժօռէս, Վայեան և ֆրանսիական սոցիալիզմի յեղափոխական թևը Ինտերնացիոնալի վերջին կոնգրէսներում—Շտուտգարտ, Կոպենհագ — յորդորում էին, գրեթէ աղերսում գերմանական սոցիալ-դեմոկրատիային՝ փոքր ինչ որոշ ու համարձակ, փոքր ինչ արի ու կորովի դիրք բռնել միլիտարիզմի ու պատերազմի խնդիրներում. Ժօռէս և իր համախոհները ամէն անգամ առաջադրում էին պարզ ու կարուկ բանաձևեր, հրաւիրում էին ամենատարմատական միջոցներով ըմբոստանալ համաեւրոպական ամենակուլ միլիտարիզմի դէմ, գործադուլով ու զինադուլով արգելք լինել զինուորական կաստաների ռազմային տենչանքներին և... ամեն անգամ նրանց այդ յստակ որոշումները վիժում էին, զարնուելով գերմանա-

կան Սոցիալ-դեմոկրատիայի veto-ին, նրա երկչոտ, հակայեղափոխական չկամութեան։

Գտնուեցան, անշուշտ, մի տասնեակ անհատներ այդ վիթխարի կազմակերպութեան ծոցում — Կարլ Լիբկնեխտ, Կլարա Ցետկին, Ռոզա Լիւքսեմբուրգ և այլն — որոնք բողոքեցին կուսակցութեան այդ հլու և անպատիւ համակերպութեան դէմ, յիշեցնելով ընկերվարական հաւատամքը և հասկացնելով Գերմանիայի շարաշուք դերը համաեւրոպական աղէտի շղթայազերծման մէջ։ Կարլ Լիբկնեխտ — պատի՜ւ մեծ հօր արժանաւոր զաւակին — մեն-մենակ Ռայխստագի վերջին նիստում ձեռնպահ մնաց պատերազմական նոր ծախքերի քուէարկութեան միջոցին. միակ խիզախը, 110 սոցիալ-դեմոկրատներից, որոնք ամենաջերմ հպատակութեան ցոյցեր էին անում Կայզերի հանդէպ... Լիբկնեխտների օրինակը, սակայն, շատ չնչին սփոփանք է, նա մի կաթիլ է ովկիանի մէջ։

***

Եւ չարաչար կը պատժուի աշխարհագրգրդ ոճրի հեղինակը։ Արդէն իսկ Գերմանիան կորցրեց իր գաղութային գոհարները, որոնցով հպարտ էր և որոնց վրայ ծախսել էր անհաշիւ դրամագլուխ։ Կորցրեց նաև մի շարք նաւեր — լաւագոյններից — կորցրեց իր ամբողջ առևտրական նաւատորմը։ Ձենք հաշուում պատերազմի վրայ ծախսուած միլիարդները և մանաւանդ մարդկային անբաւ զոհերը։ Ի՞նչ շահեց։ Բանակը կազմակերպուած պրուսական դաժան սիստեմով, 45 տարուց ի վեր կատարելագործուել էր յատուկ նպատակով. նա կոչուած էր իրագործելու սրարշաւ, գահավէժ, շանթահարող նախայարձակներ (offensive), դէպի աջ և դէպի ձախ։ Մի քանի շաբթուայ մէջ նա պիտի հեղեղեր Ֆրանսիան, պէտք է գրաւէր Պարիզը, թելադրէր իր պայմանները և ապա դառնար ջախջախիչ թափով դէպի Ռուսաստանը։

Ցուսախաբութիւնը կատարեալ եղաւ։ Հինգ ամսուայ պատերազմից յետոյ գերմանական զօրքը ոչ միայն Պարիզ չի հասել, այլ և սոսկալուած է քայլ առ քայլ յետ նահանջել։ Վերջապէս, Կայզերը չի էլ կարող խաղաղութեան անջատ բանակցութիւններ սկսել Ֆրանսիայի հետ, նա գործ ունի այսուհետև մի հզօր, անպարտելի բլոկի հետ — Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան — որոնք յայտարարել են անխղելի դաշնակցութիւն։ Վերջնական յաղթութեան համար՝ գերման բանակը պէտք է երթայ մինչև Պարիզ, մինչև Լոնդոն, մինչև Ռուսաստանի սիրտը։ Շա՜տ հեռու է նա այդ երեք կէտերից և երբէք էլ չի հասնի. որովհետև նրա զինուորական և տնտեսական ուժերն էլ անսպառ չեն... Իսկ դաշնակիցները — Աւստրօ-Ունգարիան է և Թիւրքիան... Երկուսն էլ խարխուլ, անյոյս գոյութիւններ. մինը արդէն ամօթահար յետ է նահանջում սերբերի առջև — մինչ ռուսները կանգնած են Կրակովի հանդէպ — իսկ միւսը շուտով կուլ կ'երթայ ռուսական Կոլոսին։ Զփրկեց Կայզերին և „ջհաթի", սրբազան պատերազմի մարտակոչը, որ Պոլսի իր ձեռնածուների միջոցով նետել էր մահմեդական աշխարհի մէջ. չ'իրագործուեցին և իր միւս միամիտ յոյսերը — տեսնել յեղափոխական փոթորիկներ Ֆրանսիայում, Անգլիայում, Ռուսաստանում... Երեք պետութիւնների մէջ էլ, պատերազմը յայտարարելուն պէս, չքացան վայրկենաբար ներքին պառակտումները, վերացան առժամապէս Ուլստերեան տագնապը Անգլիայում, հաշտուեցին ամենահակամարտ կուսակցութիւնները Ֆրանսիայում — անգամ Ժօռէսի թարմ դիակի շուրջը — իսկ ռուսական յեղափոխականները չեն համաձայնուի այժմ իսկ բորբոքել յեղափոխական նոր հրդեհ, լաւ գիտակցելով թէ ինչ ահաւոր վտանգ է գերման-յաղթական միլիտարիզմը համաեւրոպական խաղաղութեան, դեմոկրատիզմի ու սոցիալիզմի համար, լաւ ըմբռնելով, որ — իրերի մի տարապայման, պարադոքսային զուգադրութեամբ — անգամ Ռուսաստանը կոչուած է, իբրև դաշնակից արևմտեան ռամկավար պետութիւնների, անուղղակիօրէն պայքարելու յանուն եւրոպական դեմոկրատիզմի... Զարաչար վրիպեց Բեթման-Հոլվէգեան ձախողակ դիւանագիտութիւնը և անգամ տասնեակ տարիների դաշնակից-Իտալիան չէզոքութիւն յայտարարեց, երես դարձնելով գերման-աւստրիական հրամանատարներից, որոնք նիւթել էին եղեռնագործ դաւադրութիւնը համաշխարհային խաղաղութեան դէմ՝ առանց Հռօմի հետ խորհրդակցութեան փորձ իսկ անելու։ Իտալիայի կապը իր երկու դաշնակիցների հետ զուտ պաշտպանողական իմաստ միայն ունէր, իսկ դաշնակիցները ոչ թէ պաշտպանութեան հարկի տակ էին, այլ իրենք էին նախայարձակը։ Եւ ահա օր աւուր ամբողջ Ապենինեան թերակղզու վրայ աճում է ժողովրդական շարժումը, որ պատերազմ է պահանջում Գերման-Աւստրիայի դէմ, մի պատերազմ, որ պիտի լրացնէ Իտալիայի ազգային միութեան գործը, վերանուաճելով Տրիեստն ու Տրիենտը։ Վերջապէս, ահա սպառնական ոլոռներ են լսում ամբարտաւան ահտոնների ականջին նաև Բալկանեան երկիրներից...

Օդը ցնդեցին այդպիսով բոլոր պատրանքները և այսօր գերման ցեղը դառնօրէն քաւում է իր վարիչների յանցանքը։ Նա խպառ կղզիացած է ամբողջ երկրագնդի վրայ, նրան ամէն տեղ տառում ու հալածում են, նրանից ամէնքը գարշում են, որպէս նոր տիպի բարբարոսներից, որոնք իրենց ցեղական, կաստային շահերը առաջ մղելու համար, պատրաստ են արեան մէջ խեղդելու ամբողջ մարդկութիւնն ու քաղաքակրթութիւնը։ Միակ բարեկամը — թիւրքերն են...

Դա բարոյական կորուստն ու պարտութիւնն է, շատ աւելի ծանր, քան նիւթականը։ Բայց մի օր կը գայ, երբ յանցագործը իր բաւութեան վերջին բաժակը կը քամէ, երբ յաղթական դաշնակիցների բանակը կը կանգնի Բերլինի արքայական պալատի առջև և կը թելադրէ Հոհենցոլլերնեան արքայատոհմին ամբողջ սգաւոր ու քաղաքակիրթ մարդկութեան կամքը։ Ո՞վ գիտէ... գուցէ գերմանական ժողովուրդն ևս — անշարժութեան ու գետնատարած ստրկամտութեան այդ տխուր քուրմը—կըսթափուի վերջապէս նոյն գերագոյն տագնապի ժամին, դուրս կը քշէ մէգալոման բռնաւորներին, կը խորտակէ ռազմատենչ աւատականութեան միջնաբերդը և կը յայտարարէ հանրապետութիւն... Այն ժամանակ—և միայն այն ժամանակ—կը դրուի հաստատուն խարիսխ միջազգային խաղաղութեան համար։

ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍ-ՑԱԺԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՆԴԷՊ

Պատերազմի թատրը կ'ընդարձակուի հեռզհեռէ, ազէտը կ'առնէ շուտով իր կարմիր ծփանքների մէջ չէզոք կոչուած պետութիւնները, Իտալիա, Ռումանիա, Բուլգարիա, Յունաստան, որոնցից իւրաքանչիւրը իր „ազգային սրբազնագոյն տենչերն“ ունի, իր կորցրած հողերի դատը, իր շատ որոշ պահանջները հանդէպ Թիւրքիոյ, Աւստրիայի կամ ուրիշ պետութիւնների։ Ե՞րբ կը վերջանայ արիւնալի ֆաօսը... Պատերազմի սկզբում այնքա՜ն դիւրին էր պատասխանը... Քաղաքագէտներ ու ռազմագէտներ միաձայն յայտարարում էին, որ մէկ երկու ամսից աւելի չի տևի ազգերի իրարաջնջումը, որ ռազմական գործիքների անօրինակ կատարելագործումը՝ միացած տնտեսական հնարաւոր տագնապներին, շուտ վերջ կը տան կոտորածին։ Հինգ ամիս անցաւ արդէն— և դեռ անհնարին է նախատեսնել վախճանը. „մէկ տարի“, „երկու տարի“, „շատ տարիներ“... Այսպէս են այժմ ազդարարում նոյն ձեռնհաս քաղաքագէտները։ Բայց և ամենքի մէջ այն սփոփիչ գիտակցութիւնը կայ, որ սա վերջին պատերազմն է, վերջին ազատարար հրդեհը, որ պիտի լափէ, ոչնչացնէ եւրոպական ու ասիական հօրիզոնների մէջ բոլոր հինցած ու ոճրանիւթ գոյութիւնները, բոլոր գիշատիչ միջնադարեան պարագիտները և պիտի հարթէ միանգամ ընդմիշտ մարդկութեան խաղաղ ու բնականոն զարգացման ուղին։

Թիւրքիան էլ նետուեց յորձանքի մէջ։ Զգաց, անշուշտ—կամ գէթ իրեն զգալ տուին գերմանացի խնամակալները—որ հասել է վճռական ու ճակատագրական վայրկեանը նաև օսմանեան կայսրութեան համար։ „Եթէ յաղթէ ռուս-ֆրանս-անգլիական դաշնակցութիւնը, Թիւրքիան, միևնոյն է, պիտի կործանուի, պիտի բաժնուի երեք յաղթական պետութիւնների միջև. իսկ եթէ յաղթէ գերման-աւստրիական զինակցութիւնը, Յաճկաստանը կարող է յետ ստանալ իր կորցրած հողերի մի մասը Բալկաններում, գուցէ նաև Եգիպտոսում ու Կովկասում. պարզ հաշիւը, ուրեմն, թելադրում է Իթթիհատի կառավարութեանը՝ մտնել անյապաղ կրկէսի մէջ, թև թևի գերման-աւստրիական դաշնակցութեան հետ“։ Այսպէս պատճառաբանեց գերմանական հիպնոզի տակ դեգերող Էնվեր փաշայի կուսակցութիւնը։ Եւ ահա այսօր տաճիկ զօրքերը սլանում են մի կողմից դէպի Կովկաս, միւս կողմից դէպի Եգիպտոս։ Ռուսական բանակը մտաւ Թիւրքաց Հայաստան, վարեց մի շարք յաղթական կռիւներ, զարնուեց կլիմայական խոչընդոտներին, դանդաղեցրեց իր ընթացքը, տեղ-տեղ կանգ առաւ, բայց յամառօրէն պիտի շարունակէ մինչև Էրզրում, Հայաստանի միջնաբերդը, ուր Թիւրքիան կենտրօնացրել է պատկառելի զօրք և ստեղծել է խոշոր ամրութիւններ գերման սպաների ղեկավարութեամբ։

Ե՞րբ կը հաստատուին ռուսները Էրզրում, մինչև ո՞ւր կը հասնի ռուսական առաջխաղացութիւնը Հայաստանի մէջ, ի՞նչ են Պետերբուրգի ծրագիրները այդ երկրի նկատմամբ—ահա խնդիրներ, որ մի մի հրատապ առեղծուածներ են դառնում՝ այսօր հայութեան համար։ Ռուս լիբերալ մամուլի մէջ լսուեցին ձայներ ի նպաստ հայկական աւտօնոմիայի, բայց, անտարակոյս, այլ է որոշ շրջանների տրամադրութիւնը։ Յարի „մանիֆեստը“ կարդացուեց փոխարքայի կողմից Թիֆլիսի հայ երևելիներին, բայց այդ մեծախոսաում յայտարարութիւնների արժէքն ևս չենք չափազանցնի։ Նման մանիֆէստներ առատօրէն շռայլուեցին պատերազմի սկզբում Ռուսաստանի այլ ազգութիւններին. նրանք գրուում են ժառանգելու համար։

Այդ տեսակ յայտարարութիւնների ու խոստումների առիթով չէ, որ մենք պէտք է ծափ զարկենք խանդավառութեամբ ու ցնծութեամբ. պատմական տխուր նախընթացները մեր առջևն են։ 1826-ին ռուս-պարսկական պատերազմի մէջ հայ ժողովուրդը, իր հոգևոր առաջնորդը գլուխ ունենալով, ոտքի ելաւ զանգուածօրէն և մեծապէս աջակցեց երկու հայկական խանութիւնների նուաճումին, որոնց համար յուսացուում էր գէթ սահմանափակ ինքնօրինութիւն, աւտօնոմիա։ Ի դերև ելան, սակայն, յոյսերը, Պասկեվիչի դժնդակ ռէժիմի տակ, և յուսախաբ Աշտարակեցին նոյն ռէժիմի դէմ բողոքելով, աքսորուեց Բեսսարաբիա։ Երկու տարի յետոյ ռուսական զօրքը գրաւեց Էրզրումը, բայց և շուտով ձգեց, հեռացաւ, մահմեդական խուժանի վրէժխնդրութեանը մատնելով հայ ազգաբնակութիւնը, որ բացարձակօրէն իր հաժակրանքն էր յայտնել քրիստոնեայ բանակին և այդ պատճառով չարաչար տուժեց։ 1878-ին—դարձեալ բուռն խանդավառութիւն ու անվերջ զոհաբերու-

թիւններ Հայութեան կողմից „Ռուսաստանի ազատարար արշաւանքի“ հանդէպ, Հայ գեներալների ու սպաների մի երկայն, յաղթական շարան, դարձեալ թիւրքքրդական վրէժխնդրութեան արիւնալի տեսարաններ, դարձեալ մասսային գաղթ դէպի Կովկաս, սով ու անծայր թշուառութիւն... և իբրև հատուցումն՝ Պետերբուրգը հրամեցրեց բազմաչարչար Հայութեանը—այն էլ վերջինի աղերսական դիմումներից յետոյ — Սան-Ստեփանոյ դաշնագրի 16-րդ տարտամ յօդուածը, որ ոչ միայն անսահմանօրէն հեռու էր Հայկական ինքնօրինութեան բաղձանքներից, այլ նոյնիսկ երաշխիք էլ չէր շատ թէ քիչ լուրջ բարենորոգումների։

Զենք խօսում ռուս դիւանագիտութեան յետագայ էւոլիւսիօնի մասին, Լօրանով-Գալիցինեան աղէտաւոր մեթոդի, նրա կովկասեան ու թիւրք-հայկական արիւնոտ կիրառումների մասին և այլն։ Ի՞նչ է փոխւել այդ տխուր ժամանակներից ի վեր։ Լօրանցով-Դաշկով, գալիցինեան վայրագ ռէժիմի համակրող չլինելով հանդերձ՝ ջերմ ու համոզուած կողմնակից է ռուսացման գաղափարի և, անտարակոյս, աւելի ճարպիկ ու խելացի իրականացնող այդ գաղափարի։ Նրա տաս տարուայ փոխարքայութիւնը տւեց արդէն բաւականաչափ պերճախօս ապացոյցներ այդ ռուսարար մտայնութեան ու տրամադրութեան։

Պատճառ չունինք, ուրեմն, հորթային բերկրանքի մէջ խունկ ծխելու դեռ երէկւայ նւաճողներին։

Քսանուհինգ տարի շարունակ արեան ճանապարհով անցած և բանիցս յաղթանակներ տարած հայ ժողովուրդը պատմական այս վճռական րոպէին չէ, որ իր փրկութեան յենարանը դրսի ուժերի մէջ պիտի փնտռի։ Կովկասահայ կամաւորների լեգէօնը, որ հաւաքւած է բոլոր ծայրերից, բուռն, համազգային խանդավառութեան մէջ և որի գլուխ են կանգնած ամենաընտիր խմբապետները, պէտք է ունենայ իբրև գլխաւոր նպատակ՝ թիւրքահայ ժողովրդի պաշտպանութիւնը հոգալու հնարաւոր ջարդերի դիմաց, մանաւանդ այն վայրերում, ուր հայ տարրը թոյլ ու անզէն փոքրամասնութիւն է և ուր ռուսաց բանակը չի կարող կամ թէ չի կամենայ հասնել։ Ջարդերից ազատւելու համար, ռուս զօրքի վրայ յոյս դնելը յանցաւոր միամտութիւն է։ Ռուսները գնում են հայ երկիրը նւաճելու և նրանց սիրտը շատ չպիտի ցաւէ, եթէ տեղ-տեղ հայ արիւնը նորէն հոսէ առատօրէն։ Ինչպէս միշտ, պէտք է ինքներս խորհենք մեր ցեղի ինքնապաշտպանութեան միջոցները, և այս ահաւոր պատմական վայրկեանի մէջ դա պէտք է լինի կազմակերպութեան ու ամբողջ Հայութեան առաջնագոյն մտահոգութիւնը։ Մտածենք Հայաստանի ապագայի մասին, բայց աւելի մտածենք այն մասին, թէ ինչպէս առանց նոր արիւնառումների ու ցնցումների, դուրս բերել թիւրքահայ ժողովուրդը այս մեծ ճակատագրական փորձութիւնից։

Հայաստանի ապագան, ինչպէս և Թիւրքիոյ մայրաքաղաքի գալոց ճակատագիրը, նրա հետ մի շարք մանր ու հպատակ ազգերի բախտը պիտի որոշւի մի շարք կնճռոտ պարագաների գործակցութեամբ։

Զը տարւինք այժմից անօգուտ պրօգնոզներով ու մարգարէութիւններով. կանգնե՛նք ամուր մեր դիրքերում, մնանք վայրկեանի բարձրութեան վրայ և հետապնդենք ազգովին մեր կրկնակի նպատակը. մի կողմից՝ ըստ կարելւոյն ապահովել ժողովուրդը նոր արիւնոտ պատահականութիւնների դէմ, միւս կողմից՝ նախապատրաստել գետինը Հայկական Խնդրի գալոց աջող անօրինման համար։

ԳԱՐԻԲԱԼԴԵԱՆՆԵՐԸ

Ցուզիչ դրւագներ շատ կան համաեւրոպական այս անօրինակ փոթորկի մէջ, բայց մի քանիսը առանձնապէս աչքի են ընկնում իրենց սրատառուչ ու դրամատիկ վեհութեամբ։ Դրանցից մէկն է գարիբալդեանների թատերամուտը։ „Կարմիր շապիկը“ նորէն ընդհանուր ուշադրութիւն է գրաւում... Երևան գալով ոչ ի հարկէ գերմանական բանակի մէջ, այլ Ֆրանսիական շարքերում ուր կայ նախնի գաղափարական խանդավառութիւնը յանուն մարդկային սրբազնագոյն իդէալների...

Այդպէս էր կտակել „Համաշխարհային Ասպետը“—ինքը Գարիբալդին։ Կարմիր շապիկաւորները պէ՞տք է սլանան դէպի ամեն տեղ, ուր կայ Իրաւունքի սրբազան կռիւ ընդդէմ բռնութեան ու անիրաւութեան... Այսպէս էր կամեցել իտալացի Մեծ Յեղափոխականը, որի թովիչ անունն այսօր մի անգամ ևս ամբողջ լուսաւոր մարդկութեան շրթների վրայ է։

Գարիբալդեան լեգէօնը կռւում է այսօր տևտոնեան բիրտ թշնամու դէմ նոյն նւիրական հողի վրայ, ուր կռւել է 1871-ին իրենց անմահ Զօրավարը։ Ամենից զմայլելին այն է, որ այդ լեգէօնի մէջ են Զօրավարի վեց թոռները... Դեռ կանգուն է փառահեղ տոհմը, դեռ ապրում է Գարիբալդիի մեծ որդին—Ռիչչիոտին, որ տաս տարի առաջ մի յուզիչ նամակով իր ծառայութիւնն էր առաջարկում Հ. Յ. Դաշնակցութեանը։ Վեց զաւակ ունի նա և բոլոր վեցն էլ կռւում են այսօր Ֆրանսիական շարքերում։ Ապրում է Հերոսի տոհմը ոչ միայն ֆիզիկական, այլ և ջինջ, առնական, գաղափարական կեանքով...

Եւ ահա ընկաւ մէկը սրբազան գերդաստանից։ Բրունօ Գարիբալդին—քաջարի թոռը հոյակապ պապի զոհ գնաց գերման գնդակներին, այն վայրկեանին, երբ լեգէօնը բուռն կերպով գրոհ էր տալիս գերմանացիների դէմ՝ խլելու համար նրանց մի դիրքը։ Զուր

չ'անցաւ այդ մոլեգին գրոհը և այդ հերոսական մահը։ Երբ Բրունս շնչասպառ փուեց գետնին, գերմանացիք ձգել էին արդէն իրենց դիրքը։

Քիչ յետոյ հեռագիրը ծանուցեց միւս եղբօր—կոնստանդին Գարիբալդիի—նահատակութիւնը նոյն Ֆրանսիական մարտադաշտում...

Ռիչչիոտի Գարիբալդիին։ Հռոմը սարքեց հոյակապ ցոյց։ Խուռն բազմութիւն դիմեց դէպի Ջանիկոլո, այն պատմական բլուրը, ուր կանգնած է Ջիւզեպպէ Գարիբալդիի վեհափառ, աննման արձանը։ Եւ տեղի ունեցաւ նմանը չտեսնուած մի հանդէս, ուր գաղափարի մարդիկ մի անգամ ևս ծուներ էին իջնում տիեզերական հերոսի



ROME - Monument de Garibaldi.

ԳԱՐԻԲԱԼԴԻԻ ԾՈՒՇԱՐՁԱՆԸ ՀՌՕՄՈՒՄ

Երիտասարդ Գարիբալդիների մահը խոր յուզմունք առաջացրեց Ֆրանսիայում, Անգլիայում և ամեն տեղ, ուր դեռ վառ են գարիբալդեան աւանդութիւնները։ Աշխարհի բոլոր ծայրերից ցաւակցութեան հեռագիրներ գնացին նահատակի հօրը։ Հեռագրեց „Դրօշակ" ևս առջև և ասում էին նրան, որ դեռ չի կորել, չի փոշիացել Իդեալը այս նիւթապաշտ աշխարհի մէջ, որ բիրտ ու գոռոզ էգօիզմի, բարբարոսութեան աշխարհակալող հեղեղների հանդէպ դեռ ծածանւում է գաղափարական անձնազոհութեան դրօշը—գարիբալդիական Դրօշը...

ԱՆՑԵԱԼԻ ԱՐՇԻՎՆԵՐԷՆ

ԳԵՈՐԳ ՁԱՒՈՒՇԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տարիքս անյայտ է. թուական չունիմ։

Հայրս ու մայրս շատ կը փափաքէին, որ ես կարդալ սորվիմ, որպէս զի վերջը տէր-տէր դառնամ ու իրենց օգտակար ըլլամ։ Այդ նպատակով, 1876 մայիս 14-ին, զիս ղրկեցին Ս. Առաքելոց վանքը. այնտեղ մնացի երկու տարի։ Հասկցայ որ այդ կողմերը հայեր կային, հոն էին Արաբօն և Լեւոն, որոնք երբեմն երբեմն կը հանդիպէին մեր վանքը, իսկ ես ամեն առիթ չէի փախցներ անոնց փոքրիկ ծառայութիւններ ընելու համար։ Անոնց քով գինովցեր էի։ 1878 մայիս ամսոյ 7-ին հրաժարուեցայ վանքէն և գնացի տունս. այնուհետև իմ գործը շարունակ զէնքերը եղան։ Մեր տան մէջ կային երկու հօրեղբայրներ, երկու աշխարհական, մէկ քահանայ. այդ երկու աշխարհականները բոլոր գերդաստանով կը սիրէին զիս, որովհետև այր ու բէն գիտէի, իսկ տէրտէրը շատ ատեն կը բարկանար ու նախատինքներ կ'ընէր ինձի.—Զէնքի հետ գործ չպիտի ունենաս կ'ըսէր. գործդ պէտք է ըլլայ շարունակ Աւետարան, Մաշտոց և շարական կարդալ. բայց ես չէի լսեր ո՛չ ոքին, ալ չէի հնազանդուեր։ Օր մը տեսայ, որ պագրանցի քիւրդ աշիրաթէն երկու հոգի եկան մեր գիւղը. ասոնք դացին գիւղի եկեղեցիի ընկուզի ծառերուն տակ և սկսան քարով ու փայտով ընկուզներ վար թափել. ես չհամբերեցի, յարձակեցայ ասոնց վրայ, սկսանք զիրար ծեծել. սակայն անոնք ինձի լաւ մը ծեծեցին, որովհետև իրենք երկուք էին, մինչդեռ ես մինակ. ինձի մէկը չ'օգնեց, գիւղի հայերը թափուեր չորս կողմէն մեզի կը դիտէին՝ առանց սակայն տեղերնէն շարժուելու...

Ճարահատ թողի գիւղը ու վերադարձայ Առաքելոց վանքը, որպէս զի ընկերանամ Արաբօի և Լեւոնի։ Երբ որ մօտեցայ Բերդակ գիւղին, տեսայ որ Արաբօն և բերդակցի ուրիշ հայ մը՝ Կրպօ անունով, ձերբակալուած են և գունդ մը ոստիկաններով Մուշ քաղաքը կը տարուին։ Ի՛նչ ընեմ, Լեւոնին ալ չգտայ, յոյսս մարաւ բոլորովին ու ճարահատ կրկին գիւղ վերադարձայ։ Մի քանի օր ալ մնացի, բայց սեպտեմբեր ամիսը հասնելուն պէս թռայ գացի դէպի Հալէպ։ Հոն հասնելուս՝ Ցամատեան անցաւ Սասուն։ Ես մնացի մինչև դարուն։ Ապրիլի վերջերը եկաւ պ. Մուրադը (Համբարձում Պոյաճեան). Հալէպ քաղաքի մէջ ընկերներով մի քանի օր մնաց և յետոյ ան ալ անցաւ Սասուն։ Տասը օր վերջ, ես ալ ուղղուեցայ Հալէպէն դէպի Սասուն, Կալիէ-Կուզան Տաղվրներ Քամոյի տունը հասայ։ Պ. Մուրադի կողմէն ղրկուեցայ Առաքելոց վանքը, ինձի հետ էին մի քանի ուրիշ ընկերներ ալ։ Գործերնիս տեսնելէն վերջ՝ վերադարձանք կրկին Մուրադին։ Ծիրնկատար հասնելուս պէս՝ չորս հատ ոստիկաններ հանդիպեցան, որոնք մեզի անմիջապէս ձերբակալեցին. սակայն ես 10 բոպէ չսպասեցի ձեռքերնին, փախայ ու անվնաս ազատուեցայ. ոստիկանները բաւական մը ետևէս վազեցին, բայց չկարողացան ոչինչ ընել. ես այդ ատեն առանց զէնքի էի։ Երբ որ եկայ պ. Մուրադին հասայ, գացինք Ս. Յովհաննու վանքի կողմը գտանք Ցամադեանին, միասին առինք և եկանք Տալւորիկ ժողովքի։ Ժողովքէն վերջ զիս և զՔօլօս Յովհաննէսը ղրկեցին Պերմ և Փսանաց գաւառը։ Բաւական օրեր այդ կողմերը մնացինք և յետոյ կրկին վերադարձանք Մուրադի և Միհրանի քով։ Ճամբան, Աղբի գիւղի կամուրջին վրայ, երկու սասունցի քիւրդեր անմիջապէս զիմ ընկեր Քօլօս Յովհաննէսը բռնեցին, քովի նամակները առին։ Բայց մեր հետ այդ կողմերէն Գրիգոր անունով տղայ մը ալ կար, մենք ալ երկուքով յարձակեցանք ասոնց վրայ և ձեռքերնուն հրացանները առինք. կուզէինք զանոնք տեղն ու տեղը սպանել, բայց Յովհաննէսը չթողուց։ Զէնքերը առինք ու անցանք Խտան, բայց յետոյ մեր ետևէն հասան աղբցի քիւրդեր, մեզմէ առած նամակները նորէն մեզի վերադարձուցին, մենք ալ իրենց հրացաններն ետ տուինք ու թողուցինք որ անցնին երթան։ Մեր ընկերներէն մէկը չգտանք Աղբրիկի մէջ. անկէ անցանք Ալվառինճ գիւղը. հոն գտանք Ցամատեանին և Մուրադին. երկար ատեն մնացինք այն կողմերը, Լեւոնն ալ եկաւ Ռուսաստանէն ու վերջապէս թիւերնիս հասաւ 12-ի։ Ցամատեան մի ընկերոջ հետ կրկին անցաւ Սասուն, իսկ մենք մնացինք դաշտի կողմերը։ Այդ ժամանակ այդ տեղերը հայութիւն չկար, Աղվառինճ, Բերդակ, Գումեր, Խզլաղաճ՝ մեզ պաշտպանող ոչ ոք չկար։ Բերդակէն անցանք Տերգեվանքի սարը, մնացինք մի քանի օրեր։ Այդ տեղերը մի փոքրիկ դեպք պատահեցաւ, բայց առանց վնաս մը ունենալու ազատուեցանք։

Անցնելով նորէն Սասուն, եկանք Տաղվրնիկ Գամոյի տունը, տաս օրի չափ այդտեղ մնացինք, յետոյ կրկին վերադարձանք՝ տէռօր կատարելու համար, իսկ պ. Մուրադը մէկ ընկերոջ հետ գնաց Ս. Կարապետու վանքը։ Մենք տերրօրը կատարեցինք, սպանուողը Արաբն մատնել տուող ալիզրնանցի մատնիչ Կրպօն էր։

Սեպտեմբեր ամսի 10-ն էր, մենք վեց ընկեր էինք, այդ գիշերը անմիջապէս անցանք Փուսոտ, ցորեկ մը մնացինք այդ կողմերը ու յետոյ երկրորդ գիշերը անցանք Ս. Կարապետ։

Շաբաթ մը Ս. Կարապետ մնացինք, հոն էր Խաբախանեան Ներսէս վարդապետն ալ, որ շարունակ պ. Մուրադի հետ կը խորհրդակցէին. ինչ խորհուրդներ կ'ընէին, ես չգիտէի, որովհետև ես զինուոր էի։ Անկէ անցանք Ս. Յովհաննու վանքը, յետոյ գացինք Սասուն, գտանք Ցամատեանին, մնացինք տաս օր, Մուրադ ու Լեւոն անցան Ռուսաստան։ Բայց մայիս ամիսը երբ որ հասնէր գործի պիտի սկսէր։ Մենք ժամանակ մը ալ այդ կողմերը մնացինք, ես գնացի դէպի մեր կողմերը, մնացի մինչև մեծ պահոց օրերը։ Տիգրանակերտի կողմերէն նամակներ ստացայ, զոր առի տարի Խզլաղաճ Ցամատեանին. այնտեղէն վերադարձանք Սասուն՝ որտեղ ընդհանուր ժողովք մը ըրինք. որոշուեցաւ, որ ես մնամ Աղբի գիւղ, իսկ Ցամատեան ինքը վերադարձաւ դաշտ և յետոյ ընկերոջ մը հետ գնաց Առաքելոց վանքը, այդտեղէն վերադարձած ժամանակին իրենց դեմ կ'ելլեն երկու քիւրդ և մէկ ոստիկան, որոնց հետ կը կուռին մի քիչ և յետոյ կ'անցնին Սեմալ ազատուելու համար, բայց ի՛նչ օգուտ. հասած չհասած՝ սեմալցիներու կողմէ կը ձերբակալուին և կը յանձնուին ոստիկանին ու քիւրդերուն, որոնք Մուշ քաղաքը կը տանին զիրենք։ Ցամատեանը ձերբակալուեցաւ յունիս 1-ին։

Յունիս 16-ին, Ցալւորիկի մէջ տեղի ունեցաւ մի մեծ կռիւ, ինձ հետ էին նաև Արմենակը, Ադամը, Պօղոսը և Յովհաննէսը. կանոնաւոր զէնք չունէինք, մէկ հատ մարթին իմ ձեռքը կար, իսկ միւսներուն չախմախլի էր. հոգ մենք կորնցուցինք հինգ հատ տղամարդ ընկերներ և կին մը, իսկ քիւրդերէն սպանուեցան երեսուն հոգիի չափ։ Տեղացի խեղճ հայերը բաւական մնասուեցան, որովհետև քիւրդերը թալան ըրին, մենք ալ անպաշտպան մնացած էինք, ոչ մի տեղէ

օգնութիւն չկար, Մուրադն ալ ուշացաւ, մինչև աշուն մենք մնացինք այդ անորոշ վիճակին մէջ, Արմենակն ալ թողուց մեզ և գնաց Խնուս, ուր կը գտնուէր նաև Մուրադը, մենք այնպէս երեսի վրայ մնացինք, մինչև որ Մուրադը եկաւ։ Այնուհետև սկսանք նոր կազմակերպել Սասնոյ ժողովուրդը, որ տեսակ մը գինով վիճակի մէջ էր, քիւրդերը շարունակ կ՚աշխատին անոր ունեցած շունչեցածը թալնել տանել։

Յունիսի վերջերը չորս ընկերներով միասին գացինք քիւրդերէն ետ առնելու թալնուած ոչխարները։ Հովիւը մեզ տեսնելուն պէս՝ ոչխարները թողուց և վազեց գիւղը քիւրդերուն իմաց տալու. մեր ընկերներէն երկուքը անմիջապէս ոչխարներուն ամբողջ խումբը քշեց դէպի մօտ եղած գիւղը, իսկ մենք երեք ընկերներով մնացինք այնտեղ. արդէն 100-է աւելի քիւրդեր եկած էին մեր վրայ. մինչև երեկոյ, 6 ժամ շարունակ կռիւ ըրինք անոնց հետ, մինչև որ վերջապէս յաջողեցանք մեր ոչխարների խումբին հասնիլ և անվնաս մտնել գիւղը։ Գացինք անմիջապէս Մուրադի քով։ Ոչխարներու թիւն էր 65, երեսուն հատը գիւղացիներուն բաժնուեցաւ, իսկ մնացածն ալ խումբին բաժին մնաց, զոր կերանք։

Յուլիս 27-ին նորէն գնացինք ոչխար բերելու, այս անգամ ալ քիւրդերու հետ ունեցանք մի խոշոր կռիւ, մինչև որ յաջողեցանք խլել անոնց ձեռքէն մեր ոչխարներն և անվնաս ազատելով վերադառնալ գիւղ։

Յուլիս 30-ին Սեմալի վերև, Զայ ըսուած տեղը, ունեցանք նորէն կռիւ մը, յետոյ կռիւ ունեցանք Անտոնք, Մուրատն ալ այդ ատեն մեզի հետ էր. մեր կողմէն սպանուեցաւ վեց մարդ, իսկ թշնամիներէն բաւական հոգի. այդ կռիւը տևած էր ամբողջ օր մը, առաւօտէն մինչև երեկոյ։ Իրիկուայ դէմ չթողուցինք, որ Մուրադը մեզ մօտ մնայ, զինքը ապահովելու համար գիշերով զայն Տալորիկ վերադարձուցինք, որովհետև այն կողմերը խաղաղ էր։

Բայց թշնամին հետ մեր կռիւները չդադրեցան երբէք. կռիւ Զայի մէջ, կռիւ Անտոք, նորէն կռիւներ Անտոքի ու Գավրուսրքի մէջ, վերջապէս կռիւ Կալի գիւղի մէջ։ Չորրորդ կռիւէն վերջն էր, որ վառուեցաւ Կալեկուզան գիւղը։ Հէնրք ու Սեմալ ու ուրիշ գիւղեր արդէն վառուած էին. ժողովուրդը այլ ևս դիմադրելու անկարող էր, չկար սակ օգնութիւն, չկար ռազմական ոյժ, մենք ալ քիչուոր էինք, թիւով չորս հոգի միայն։

Գացինք Տալորիկ, Մուրադի քով, բայց հազիւ թէ հասած, արդէն կոտորածն սկսաւ։ Մուրադն ալ մեզի հետ՝ ամբողջ օր մը կռիւ ունեցանք Հրանուտ ըսուած տեղը։ Քիւրդ աշիրէթները այդ տեղի հարուստ մի քանի գերդաստաններու վրայ յարձակեցան, իսկոյն օգնութեան հասանք և յաղթեցինք թշնամին։ Հոգ մնացինք այնուհետև 3—4 օր ալ, իմացանք, որ Տալորիկէն 11 հոգի ձերբակալուած են, կոտորնու մօտլայի միջոցաւ զգացինք թէ պիտի մատնուինք և թշնամին ձեռքը անցնինք, առաջարկեցինք Մուրադին և Գասպարին, որպէս զի շուտով հեռանանք այդ կողմերէն, բայց ի՞նչ օգուտ, մեր ձայնը անլսելի մնաց. կարճ ժամանակ մշն ալ մնացինք այդ տեղերը, Տալորիկի շրջանակները և օր մը ալ կանուխ, արշալոյսի ատենները, գացինք մտանք անառիկ քարայրի մը մէջ, բայց հազիւ 3—4 ժամ մնացինք հոգ, մատնուած էինք արդէն. թիւրը զօրքերն ու քիւրդ աշիրէթները լեռ ու ձոր լեցուցած էին, ամեն տեղ քիւրդերն ու թիւրքերը իրարու կը կանչէին. „Հոս է Մուրադ էֆէնտին իր ընկերներով՝ և տՀա ամեն կողմէ քիւրդեր ու թիւրքեր կը հաւաքուէին։ Առանց ժամանակ կորսնցնելու, թշնամին մեզի պաշարեց, կռիւն սկսաւ արդէն, մենք ներսէն, անոնք դուրսէն. ամբողջ 24 ժամ օրին մէջ գնդակներ կը խաղային. ամենէն վերջ թիւրքերու մ ի ր ա լ ա յ ը վերէն ձայնեց. „պէտք է անձնատուր ըլլաք, այլ ևս հրաման չկայ սպանելու“։ Մենք չենք գիտեր, թէ ինչ պիտի ընենք, ընդամենը վեց ընկերներ էինք, բայց հինգ հատ գիւղացի ծանօթներ ալ մեզի հետ էին, ուստիքնիս շատ քիչ էր, կողով մը խաղող և չանախ մը ալ կորեկ ալիւր միայն ունէինք, ալ ուրիշ ոչինչ։ Թշնամին իր հետ բերած էր խոտ և քարիւղ, որպէս զի քարայրի դրան առջև վառեն և մեզ մուխով ծուխով խեղդեն. բերած էին նաև երկու հատ ալ թնդանօթ։ Ճար ու ճանապարհ չկար մեզ համար, օգնութեան յոյս ալ չկար։ Միրալայը շարունակ կը ձայնէր. „անձնատո՛ւր, անձնատո՛ւր“։ Այն ատեն մեր մէջէն Գասպարը ձայնեց և ահա անոր ծանօթ քիւրդերէն մէկը մօտեցաւ, Գասպարը և քիւրդը բաւական երկար խօսեցան։ Գասպարն ըսաւ թէ այս քարայրին մէջ օտար մարդ չկայ, ես և իմ գերդաստանս ենք, 1000 դրշ. և երկու հատ ալ ջորի կուտամ, եթէ քիւրդ աղաները հեռանան այս տեղէն։ Քիւրդը գնաց Գասպարի բաածները հաղորդելու։

Ամեն ինչ անօգուտ դարձաւ, քիւրդերը չ՚ընդունեցին եղած առաջարկը. այն ատեն Գասպար 1000 դրրուշ 2 ջորի և 4 տղամարդով գնաց յանձնեցաւ քիւրդերուն և ըսաւ. „Առէք ասոնք, սպանեցէք գիս, կախեցէք, ինչ կուզէք ըրէք, միայն թէ իմ գերդաստանս ազատ թողուցէք։ Այդ մարդու գերդաստանը մենք էինք, մեզ ազատելու համար ամեն բան ըրաւ. Այդ չորս մարդերուն մէջ, սրոնցով զնաց յանձնեցաւ, իր որդին Աւետիսն ալ կար, բայց ի՞նչ օգուտ որ ամեն բան անօգուտ անցաւ։ Այն ատեն Գասպար մեզի գալով ըսաւ. „Դուք գիտէք տղաք, ալ իմ ձեռքս բան չմնաց ընելու. 4 հոգի յանձնեցի, ահա ես ալ կը յանձնուիմ՝։ Բոլորովին ճարահատ՝ մենք ալ յանձնուեցանք։ Երբ զօրքերուն մէջ մտանք, սարսափելի յարձակումի մը ենթարկուեցանք ասոնց կողմէն. մեզ կողոպտեցին, մեր վրայէն ամեն բան առին. միրալայը, գօլաղասին, պինպաշին աչքերնին շարունակ մեր վրայ տնկեր էին. մեզ բոլորովին կողոպտելէ վերջ, քիւրդ մը հրացանի կոթով ուժով մը զարկաւ Մուրադի գլխուն և զայն ուշաթափ ըրաւ։ Քիչ վերջ, երբ Մուրադը զարթեցաւ, քիւրդեր մեզ կապեցին և ուղղակի բանակ առաջնորդեցին. հոն սկսան հրացան արձակել, ուրախութիւն ընել, եօթը անգամ ալ թնդանօթ պարպեցին։

Այնուհետև մեզ 15 օր բանակին մէջ պահեցին, յետոյ տարին Սեմալ, որտեղ կը գտնուէր մեծ բանակը, Երզնկայի միւշիր Շաքիր փաշան ալ հոն եկած էր. մեզ տարին անոր ներկայացուցին, յետոյ տարին եկեղեցի, կապեցին ձեռքերնիս, ոտքերնիս և սկսան կարգաւ ծեծել ու չարչարել, լման երկու գիշեր և երկու ցերեկ ո՛չ հաց տուին, ո՛չ ջուր, ո՛չ քուն քնացինք, ո՛չ հանգիստ առինք. նոյնիսկ ջուր թափելու երթալն արգելուած էր. մեր բոլոր ազաչանքն ու պաղատանքը անլսելի մնաց։ Երկու օրուայ այս չարչարանքներէն յետոյ, մեզ առաջնորդեցին մուսթանթիքին առաջ՝ խօսելու համար։ Մուրադն անկարող եղաւ մի քանի բառ բսելու, խմելու համար կուժ մը ուզեց, յետոյ թուղթ ու գրիչ բերին, իրենք հարցումներ ըրին, իսկ Մուրադ մէկ առ մէկ անոնց պատասխանը գրեց։ Երբ քննութիւնը վերջացաւ չորրորդ օրը՝ մեզ տարին Մուշ։ Հոն ալ բաւական մը չարչարեցին մեզ։ Երկու ամիս ապասեցնելէն յետոյ, գիս, Մուրատը, Գասպարը, Ադամն ու Կարապետը տարին Բաղէշ։ Մեր ընկերներէն մէկը՝ ռուսաստանցի Սենեքերիմը Մուշի բանդին մէջ մեռաւ։

Երբ որ Բաղէշ տարին մեզ, բոլորիս ալ առանձնացուցին և արգիլեցին իրարու հետ խօսիլ։ Բայց Բաղէշի մէջ Մուրադը շատ չարչարեցին, մինչև անգամ պեխերը մկրատով կտրեցին, ջուրի տեղ քարիւղ խմցուցին, 24 ժամ շարունակ ոտքի կանգնեցուցին։ Այս տանջանքներէն յետոյ Մուրադը հիւանդացաւ ամբողջ մէկ ամիս. երբ մեր միւս ընկերներն ալ Մուշէն Բաղէշ բերին՝ Մուրադն արդէն լաւացած էր։ Խօսք կար թէ հիւպատոսը Մուշ եկած էր. մեզ նորէն քննեցին, երկար բարակ հարց ու փորձ ըրին, Մուրադին 101 տարիի վճիռ տուին, ի ն տ ա մ (կախաղան), իսկ ինծի և իմ ընկերներուն 15-ական տարուայ վճիռ։ Յունուարի մէջ էր, որ այս վճիռը տուին, իսկ ապրիլ 10-ին էր կարծեմ, որ մեզ արդէն Մուշ վերադարձուցին, հիւպատոսներուն հրամանաւ։ Մուշի մէջ մեզ առաջնորդեցին սբ. Յարի զօրքերու զօրանոցը, հոն իւրաքանչիւրիս առանձին-առանձին սենեակներու մէջ դրին, իւրաքանչիւրիս դրան առջև ալ մէկ-մէկ պահապան կեցուցին։ Սենեակի պատուհաններուն վրայ հսկողութիւն կը կատարուէր, ամէն բան, իրարու հետ յարաբերութիւն, երթևեկութիւն բոլորովին արգելուած էր։ Յաս օր վերջ մեզ տարին հիւպատոսներուն առջև, նորէն առանձին-առանձին երկար բարակ հարցաքննութիւն. ամէն մէկիս ամբողջ օր մը, երկու օր քննեցին. Մուրադին քննութիւնը երեք օր տևեց. նորէն մեզ բանդ առաջնորդեցին։ Այս անգամ ծեծը դադրած էր, բայց ոևէ յարաբերութիւն ունենալ նոյնիսկ իրարու հետ, բոլորովին արգելուած էր։

Այսպիսով տարին լրացաւ։ Ապրիլ ամսուայ մէջ էինք, եկած էր Մեծ Զատիկը,—Յարութեան կիրակին։ Մէկ-երկու շաբաթ ալ անցան, սկսանք խորհուրդ ընել փախչելու համար։ Սեպտեմբեր ամսուայ մէջ էր, ես ծակեցի իմ սենեակը, բայց զօրքերը տեսան և զիս փոխադրեցին վերի յարկը։ Հոն մնացի երկու ամիս, նորէն զիս փոխադրեցին վար։ Հոն ալ սենեակ մը ծակեցի, որպէս զի փախչէի. գրեցի Մուրադին, բայց չթողուց, ըսաւ թէ՝ այժմ ձիւն է դուրսը, թող որ գետինները սևնան, թէ ոչ չենք կարող ազատուիլ։ Բայց երբ որ ձիւները սկսան հալիլ, ես հիւանդացայ ամբողջ ութ օր և չկարողացայ երբէք շարժուիլ։ Ութ օր յետոյ լաւացայ, բայց նորէն եկան և զիս վերի յարկը փոխադրեցին. ա՛լ զիս վարի յարկը չէին թողեր, որովհետև տեսած էին անգամ մը պատ ծակելու։ Բայց ես վերջապէս երեքշաբթի օր մը պայմանաւորուեցայ իմ ընկերներու հետ, որ աշխատին պատրաստ ըլլալ որպէս զի գիշերուայ ժամը 4-ին փախչինք։ Փախչելու ծակերը նորէն պատրաստուած էին. ժամը 4-ին առեները իմ վերջին գրութիւնս ղրկեցի Մուրադին և իր կողմէն „երթաք բարով"ի պատասխան մը ստացայ։ Թղթակցութեան ծակը գոցեցինք և ճիշտ ժամը 4-ին, դուրս նետուեցանք 4 ընկերներով. ես ու Յովհաննէսը և յետոյ երկու ուրիշ հայ ընկերներ՝ Աւօ Գասպարեանը և Խաչօ Տվիեանը։ Սկսանք փախչել արագօրէն. դուրսը ձիւն կար, անձրև ալ կուգար՝ գետինները ամբողջ ջուր էին. կարծես թէ մեր փախուստը յաջող էր, մեր ընկերներէն մէկը ճամբան յոգնեցաւ, առնեցինք ձեռքէն և սկսանք քաշել զայն. կամաց-կամաց կը լուսանար, արշալոյսը մօտ էր, երբ հասանք Տերգեվանը։ Ամէն տեղ ձիւնով ծածկուած էր, շատ ատեն ճամբանիս կը կորնցնէինք. վերջապէս բարձրացանք Տերգեվանքի սարը, այնտեղ ինծի ծանօթ քարայր մը կար, ընկերներով մտանք այդ քարայրին մէջ։ Արշալոյսն արդէն սկսած էր բացուիլ, քամին շարունակ կը փչէր, իսկ ցուրտը սարսափելի էր։ Երկու գիշեր և երկու ցերեկ մնացինք այդ քարայրին մէջ առանց հացի, առանց ջուրի։ Երկու որ վերջ մի քիչ հանդարտեցաւ եղանակը։ Երեկոյեան ժամը 12-ին մեկնեցանք դէպի Ս. Առաքելոց վանքը. ժամը 2-ին հասանք հոն, կրակ վառեցինք, մի քիչ տաքցանք, փորերնիս կշտացուցինք, առինք մեզ համար պէտք ըլլալիք չարուք, գուլպայ և պաշար ու անցանք։

Մեզմէ վերջ Մուրադ տարի մը ալ Մուշ մնաց ու յետոյ կառավարութիւնը զայն աքսորեց։

Երբ վանքն էինք, լսեցինք որ Աբրոն և Թոմասն Սասունի մէջ ձիւնի տակ մնացած, խեղդուած են։ Խոյսն անցանք Սասուն։ Հոն գտանք մի քանի ընկերներ ալ։ Մի քանի օր մնացինք Կալի գիւղի մէջ։ Խարախանեան Միսակ ու Հայրարձումը քանի մը ընկերներով անցան դէպի Տալւորիկ, իսկ ես և ուրիշի Յարութիւնը մնացինք, որպէս զի Աբրոյի և Թոմասի դիակները հանել տանք ձիւնի տակէն։ Հանեցինք դիակները, բերել տուինք քահանայ, պատարագ ընել տուինք և թաղեցինք մեր ընկերները։ Անդրանիկն ալ այդ ատեն Սասուն էր, բայց չմնաց երկար, մի քանի ընկերներով մեկնեցաւ։ Վերջը Միսակն ալ գնաց։ Ես չորս ընկերներով մնացի Սասուն. ամբողջ երկու տարի առանց զեկի էինք, ոչ մեզ պահող ունէինք, ոչ պաշտպանող, ոչ մի տեղէ օգնութիւն չկար, ուր որ կ'երթայինք կը հրէին, կը հրմշտկէին մեզ. ինչ նեղութիւններ ու չարչարանքներ քաշեցինք, զոր չեմ կարող պատմել ու գրել։ Երկու տարի յետոյ, աշնան ատեններ, Սերոբը իր մի քանի ընկերներովը եկաւ Սասուն՝ զէնքի փոխադրութեամբ, ինք դարձեալ չմնաց, վերադարձաւ։ Անդրանիկն ալ եկած էր. իր մի քանի ընկերներով մնաց մեզ մօտ մինչև գարուն։ Գարնան սկիզբները Սերոբ և Գուրգէն իրենց խումբով Ախլաթէն եկան Սասուն, բայց հազիւ թէ տասը օր եղած էր իրենց գալը, երբ Դալիբ էֆ. եկաւ Սեմալ և սկսաւ սաստիկ խուզարկութիւններ ընել, բայց չկարողացաւ ոչ մէկը ձեռք անցնել։ Երբ խուզարկութիւնը լրացաւ, Սերոբ իր մի քանի ընկերներով նորէն վերադարձաւ Խուլաթ։ Մենք Գուրգէնի առաջնորդութեամբ մինչև աշուն մնացինք Սասնոյ մէջ։ Հոկտեմբերին՝ ես, Գուրգէնը և երեք ընկեր ալ հետերնիս գացինք Քոփ, երկու օր մնացինք այնտեղ, Սերոբ իր խումբով Խուլաթէն եկաւ Քոփ. Անդրանիկն ալ ընկերոջ մը հետ դաշտէն վերադարձաւ. թիւերնիս 17-ի բարձրացաւ։ Բայց այդ ատեն, գիշերուայ ժամը 3-ի ատենները, երբ տան մը մէջ էինք՝ յանկարծ պաշարուեցանք. Սասնոյ Պշարի Խալիլի մարդիկներն էին պաշարողները. այդտեղ մեր ընկերներէն մէկը վիրաւորուեցաւ, բայց մենք ներսէն թշնամիի վրայ կրակ արձակելով յաջողեցանք դուրս ելնել մեր եղած տեղէն. քիւրդերը փախան կորսուեցան, առանց նոր վնաս տալու, իսկ մենք առինք մեր վիրաւոր ընկերը և եկանք Աղբի։ Այնուհետև Սերոբ մի քանի ընկերներով անցաւ Տալւորիկ, իսկ ես, Գուրգէնը և մի քանի ընկերներ մնացինք Կալէկուզան գիւղը՝ զարնուող ընկերոջ քով, որ հիւանդ էր։ Մեր խեղճ ընկերը ամբողջ վաթսուն օր հիւանդութիւն քաշելէ յետոյ մեռաւ. այդ ընկերոջ անունն էր Կարապետ Կիմակոսեան, Խրյանք նահանգի Փարկայ գիւղէն։

Գալով մեզի, մենք բաժնուեցանք երեք մասի. մի քանի ընկերներ մնացին Սերոբի մօտ՝ Աղանք գիւղի մէջ, մէկ ուրիշ մասը Գուրգէնի հետ Կալիէկուզան գիւղը մնաց, իսկ ես, Ռուբէն, Տիգրան, Սեդրակ, Վարդան և ուրիշ մի քանիներ որոշ գործերով դաշտ կ'իջնէինք շատ ատեն, մինչև որ եկաւ գարունը։ Նորէն հաւաքուեցանք. Գուրգէնը իր հետ եօթ ընկեր առնելով գնաց Մուշ, անկէ ալ անցաւ Ցրոնք գիւղը,

բայց հազիւ թէ ընկերները հոն հասած՝ ուէս Սլօյի մատնութեամբ և Ալայ պէյի ու Տալիպի առաջնութեամբ մարագի մը մէջ կը պաշարուին։ Թշնամին մարագը կը վառէ, տղերքը կիսամեռ դուրս կ'ելլեն և բոլորն ալ կըսպաննուին, իսկ քիւրդերէն ու զօրքերէն կըսպաննուին Տալիպ էֆէնտին և 12 հատ ալ զօրք ու քիւրդ։ Աշնան ատենները Սերոբն ալ կըսպաննուի իր ընկերներով մի քանիներու մատնութեամբ։ Երբ Սերոբն սպաննուեցաւ, թիւրքեր ու քիւրդեր կարծեցին, թէ յեղափոխականներու սարսափը կորաւ... Սերոբի վրայ եկողներն էին Ալայ պէկը, Խալիլ աղան, փօլիս Հիւսէին, Պալաղցի Պշարի Ճառին, իրենց հետ ունենալով բազմաթիւ զինուորներ։ Մենք անդին ութ ընկերներով մնացինք Սասուն. այդ ատեն մեր ալ առաջնորդն էր Անդրանիկ։ Այդ ձմեռը մնացինք անպաշտպան, թէ դաշտի և թէ Սասնոյ ժողովուրդը վերջին աստիճան յուսահատեր էր, հանգստութիւն չունէինք երբէք, մատնիչները շատցեր էին, անկարելի բան՝ երկու օր շարունակ մի տան մէջ մնալ, ժողովուրդն ալ չէր ընդուներ մեզ, Անդրանիկն ալ հիւանդ էր. կը քաշէինք ու կը քաշքշէինք իրարու հետ, մինչև որ հասաւ ապրիլ ամիսը։ Այդ ատենն էր, որ գացինք գտանք Գիւղաշէնի Աւէն. բռնեցինք և սկսանք տեղեկութիւններ ուզել իր ընկերներու մասին. մարդը վախէն խօսեցաւ ամեն ինչ, սպաննեցինք զինուորը իր կինը և մի ուրիշը, ադկէ զատ սատկեցուցինք ու, քանի հատ ալ։

Ամառը գալուն պէս, ես գացի Առաքելոց վանքը. հետ էր նաև վանքի տիրացու Մուրադը, որ ժամանակ մեզի ընկեր եղած էր։

Ցերեկւան ժամը ինն էր, երբ 12 ձիաւոր և 30-ի ալ հետևակ ոստիկաններով եկան իմ վրայ, ամբողջ ժամ իրարու հետ կռուեցանք, հրացանս աւրուեցաւ, սկսայ գրաշել, մութն ալ արդէն կոխեց, գացի պահուեցայ գիւղի այգիներուն մէջ, շատ աշխատելով հազիւ կարողացանք հանել հրացանի մէջէն։ Համբարձումը քանի ընկերներով եկաւ գտաւ զիս, որոնց հետ միասին ես Սասուն։ Հոկտեմբերին բոլոր ընկերներով կրկին դաշտ իջանք որովհետև ապրելու համար միջոց չկար։ Լսեցինք այդ տարի որ Պշարի Խալիլը եկած է Մուշ։ Մի քանի ընկերներ սկսանք Մառնկայ սարը երթալ. ճամբան հանդիպեցանք Պշարին և իր մարդոց, զարկինք թէ զինքը և թէ իր ընկերները, յետոյ անցանք Սասուն։ Մեր խումբի ընկերներուն թիւը այդ ատեն կը հասնէր 30-ի։

Աշնան վերջերը գացինք Բերդակ, գործով։ Ես, Քէ Մուրադը և Գ... Հոն մնացինք մէկ օր։ Այդ գիւղին ռէսը՝ Բարսեղ, Մուշ գնալով մեզ մատնեցին։ Անմիջապէս 70 հատ ձիաւոր և 20 հատ հետևակ զօրք Ալայ պէյի և Հիւսէին աղայի առաջնորդութեամբ եկան մեր վրայ. բարեբախտաբար լուրը շուտ հասաւ. անմիջապէս դուրս ելանք գիւղէն ու բռնացանք Բերդակայ լերան գագաթը։ Ժամը 9-ն էր, կռիւը սկսաւ, կառավարութեան զինուորներուն միացած 40 հատ ալ քիւրդեր. կռիւը տևեց մինչև իրիկւայ ժամը մէջը. անվնաս ազատուեցանք և անցանք գացինք։

Ցունուար ամսուան մէջ էր, երբ ես, Համբարձումը, Ցարութիւնը, Անդրոն, Յակոբը և Ղազար Մուշէն կապար փոխադրելու համար ճամբայ ինկանք։ Կապարի բեռները հետերնիս երբ որ հասանք Ե... ձորին մէջ Պնաւ ըսած տեղը, ուզեցինք մի քիչ հանդիստ առնել, նորէն հանդիպեցանք քիւրդերու խումբի մը. գետինը ամբողջ ձիւնով ծածկուած էր, միմիայն իմ քով կար 40 լիդր կապար. ընկերներէն մի քանիսը տակաւին ետն էին. Մուշի մէջ ալ ընկերներ կային։ Քիւրդերը լուրը հասցուցած էին Մուշ։ Օրդհնեալ ըլլայ Աստուած, զօրք չեկաւ վրանիս. Մուշէն տղերքը ազատուեցան անվնաս. մենք ատին ունեցանք կռիւ, քիւրդերը ունեցան երկու զոհ և երեք հատ ալ վիրաւոր։ Կապարը ես հասցուցի Քոփ՝ ընկերներուն։

Ապրիլ ամսուան վերջերն էր, երբ չորս ընկեր ալ հետս գացի Ցրոնք վառօդ փոխադրելու. վառօդի համար 6 ոսկի կար քովերնիս, վառօդը պիտի բերուէր Բերդակ։ Այդ պատճառաւ ես և մի քանի ընկերներ գացինք Բերդակ, լուսնալու մի ժամ էր մնացած, բայց երկու ոստիկան և քիւրդ մը մեզ տեսան, գիւղին մէջ կար 20 ձիաւոր, իսկ 20 ձիաւոր ալ գիւղէն կէս ժամ հեռու կը գտնուէր։ Կռիւը սկսած էր արդէն։ Հազիւ գիւղի ձիաւոր զինուորներէն ազատուեցանք ու սկսանք հեռանալ, երբ միւս 20 ձիաւորներն ալ հասան։ Հետզհետէ քիւրդերու և թիւրքերու թիւը կ'աւելնար, անոնց թիւը 2500-ը կ'անցնէր։ Թշնամին հետ կռուելով՝ հասանք մինչև Կ. աղբիւրը։ Այս կռիւը առաւօտեան ժամը 10-ին սկսաւ և իրիկւան ժամը 10-ին վերջացաւ։ Հետիս ընկերներն էին Յակէն, Գալէն, սղանցի Արամը, մուշեցի Սիմօնը։ Մեզմէ [illegible] որուեցան Գալէն և Թիվին, բայց վերջը անոնք ալ լա[illegible], իսկ թշնամին երեք մարդու կորուստ ունեցաւ։ Այս[illegible]ն ալ այսպէս ազատելով անվնաս՝ անցանք Սասուն։ [illegible]ջապէս տասներկու տարի է, որ յեղափոխական հայ[illegible]եմ։ Ունեցեր եմ 14 կռիւ. 20 ամիս ալ բանտ եմ [illegible]՝ Մուշի և Բաղէշի մէջ։

ԳԷՈՐԳ ՉԱՒՈՒՇ

ԵՒԻՐԱՏՈՒՈԹԻՒՆ

Դրօշակ»ի Խմբագրութիւնը ստացել է՝

11 թ. յուլիս-դեկտեմբեր.—Թաւրիզ՝ ընկեր Ց.-ից 100 ֆրանկ։ Եւ՝ Կ. Պողոսեանից 7 ֆր.։ Շէրիկսն (Զավա) Ս. Ս. Միից 40 ֆր.։ Թեհրանի Կ.-ից գրքերի արժէք եւ «Դրօշակ»ի նորագին 150 ֆրանկ։

12 թ. յունուար-դեկտեմբեր.—Ժրնեւ՝ նուէր ընկեր Բախտիարից սնկ։

4 թ. յունուար-դեկտեմբեր.—Տրապիզոն՝ Կ.-Կ.-ից տեղական նուեր եւ «Դրօշակ»ի բաժանորդագին 467 ֆր. 45 ս.։

Զինուսանի Կ.-Կ.-ից ի նպաստ Երկրի ինքնապաշտպանու- 050 ֆր.։

Նեւ՝ անցորդ ընկեր Ա. Լ.-ից նուէր 500 ֆրանկ, Մ. Ս.-ից 20 ս., տիկին Թաքէոսեանից 100 ֆր.։ Գումար 620 ֆր. 80 ս.։

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայ պատերազմի միջոցին յարաբերութիւնները [illegible]լնելով Երկրի հետ (Թիւրքիոյ, Կովկասի)—ստիպեցանք «Դրօշակ»ը ժամանակաւորապէս դադարեցնել։ Բաժանորդներին կը ղրկուի միւմի օրինակ մեր մի վերջին հրատարակութիւնից։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԴՐՕՇԱԿ“Ի

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

		Մր.	ս.
1.	**Ապստամբական ոգի** (սպառուած)		10
2.	**Յեղափոխական կեանքից** (սպառ.)		5
3.	**Դեղջնի տպարան** (սպառ.)		5
4.	**Դիտական սոցիալիզմ, Ֆ. ԷՆԳԵԼՍ** (սպառ.)		40
5.	**Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր** (Դ. տպագր.)		—
6.	**Կուկունեան խմբի արշաւանքը** (սպառ.)		20
7.	**Կարնոյ յիշատակին** (*Զարթ Հայաստան*) (սպառ.)		50
8.	**Հ. Յ. Դ. Ռ-ոյ բնդհ. ժողովի տեղեկագրութիւնը**		—
9.	**Գրքիչներ,** Homo homini lupus, **ՎԱՐԴԳԷՍ** (սպառ.)		20
10.	**Եղիսաւարդներին, Պ. ԿՐԱՊՈՏԿԻՆ,** թարգմ. Մ. Վ. (սպ.)		20
11.	**Ազատութեան նահատակներին, ՂԱՐԻԲ,** Ա. (սպառ.)		30
12.	„ „ „ Բ.		60
13.	**Ամբոխային տրամաբանութիւն, ԷԼԼԷՆ** (սպառ.)		50
14.	**Ազատութեան նահատակներին, ՂԱՐԻԲ,** Գ.		30
15.	**Հայաստան եւ Մակեդոնիա**		50
16.	**Սովկասեան վէրքեր, Է. ԱԿՆՈՒՆԻ** (սպառ.)	3	—
17.	**Հայրենիքի զաղափարը, ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ** (սպ.)	1	—
18.	**Կազմակերպական կանոններ** (Բ. տպագր.)		—
19.	**Դէպի կռիւ, Է. ԱԿՆՈՒՆԻ** (սպառուած)	2	—
20.	**Յեղափոխականներ, Ս. ՆԻՐՎԱՆԵԱՆ** (սպառ.)		20
21.	**Նախագիծ Սովկասեան զործունէութեան** (Բ. տպ.)		20
22.	Подвиги царизма, В. Араратскій		—
23.	**Les tueries de Bakou,** A. ARAZI (սպառ.)		20
24.	**Յեղափոխական դասն** (սպառ.)		20
25.	**Հ. Յ. Դ. Ն-ոյ բնդհ. ժողովի տեղեկագրութիւնը**		—
26.	**Նոյ Մահմէտականներին** (թուրքերէն)		10
27.	**Les Plaies du Caucase,** AKNOUNI	2	—
28.	**Ազատութեան նահատակներին, ՂԱՐԻԲ Դ.** զրոյկ (սպ.)		40
29.	**Մեծ մարդասպանի դէմ** (Դատավարութիւն)		50
30.	**Վիսսի բազէն, ՎՏԱՐԱՆԴԻ**		50
31.	**Յեղափոխականի մտքեր, ԲՐ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ**	1	—
32.	**Հայորդիներդ, ՍԻԱՄԱՆԹՕ**		50
33.	**Սասուն-Մուշի կռիւները**		10
34.	**Հայոց տանջանքները եւ Եւրոպան** (դասախօսութիւն կարդաց. Բերլինում), **Է.Դ. ԲԵՐՆՇՏԱՅՆ**		50
35.	**Մարտական հրահանգներ, ԱՆԴՐԱՆԻԿ**	1	—
36.	**Միացէ՛ք,** կոչ Թիւրքիոյ բոլոր ազգերին (թիւրքերէն)		10
37.	**Թիւրքական բանտերը, ՄԱՐ**		25
38.	**Տնտեսական կուսակցութիւններ Ռուսաստանում, ԱՐԱՐԱՏՍԿԻ**		50
39.	**Հայաստան եւ Եւրոպա** (դասախօսութիւն կարդացուած Բերլինում), **Գ. ԲՐԱՆԴԷՍ**		20
40.	**Ազգիւր-Սիրոք** (Կենսագրական), **Ս. Մ.**		25
41.	**Եւրոպացիների կարծիքներ Հայ Դատի մասին**		30
42.	**Կանոնագիր Հ. Յ. Դաշնակցութեան (1907)**		—
43.	**Դ.-ոյ Ընդհանուր ժողովի որոշումներ (1907)**		—
44.	**Հ. Յ. Դաշնակցութեան „Ծրագիր“ (1907)**		—
45.	**Programme-minimum,** Հ. Յ. Դ.		—
46.	**Rapport** (Տեղեկագիր) **ներկայացուած Միջազգային սոցիալիստ. կոնգրէսին** (Շտուտգարտ)		—
47.	**Դէորգ Զավուշ**		20
48.	**Déclaration du Congrès des Partis d'opposition de l'Empire Ottoman**		—
49.	**Le Criminel sur le Trône,** E. AKNOUNI		10
50.	**Յայտարարագիր Օսմանեան կայսրութեան ընդդիմադիր տարրերու կոնգրէին**		—
51.	**Հ. Յ. Դաշնակցութեան „Ծրագիր“** (Ռուսերէն)		—
52.	**Սոցիալիստի նամակները, ԱՐԱՐԱՏՍԿԻ**	1	—
53.	**Նախագիծ ժողովրդ. իրաւագաստիարակ., ԴՈՒՄԱՆ**		40
54.	**Ընդհ. կրթութեան թեորիաներները, Դր. Ժ. ՕԼԻՎԷՆ,** թարգմ. **ԱՏՈՄ**		50
55.	**Յեղեցոյց բնկերներին, ԱՐԱՐԱՏՍԿԻ**		30
56.	**Համաժողովրդական բանակ, Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ**		30
57.	**Հ. Յ. Դաշնակցութեան „Ծրագիր“ (1909)**		—
58.	**Որոշումներ Հ. Յ. Դ. Ն-ոյ Ընդհանուր ժողովի**		—
59.	**Տեղեկագիր** (*Rapport*) **ներկայացուած Միջազգային սոց. կոնգրէսին** (Կոպենհագ), **Մ. Վ.**		20
60.	**Նոյնը զերմաներէնի լեզուով**		20
61.	**Վերածնուող Հայրենիքը եւ Մեր Դերը** (պատկերազարդ), **ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ**	3	—
2.	**Հոսանքներ** (Մարքսիզմ, Անարխիզմ, Սինդիկալիզմ), **ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ**	3	—
63.	**Հայկական Շարժման Նախապատմութիւն, Հատոր Առաջին** (պատկերազարդ), **ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ**	3	—
64.	**Հայկական Շարժման Նախապատմութիւն, Հատոր Երկրորդ** (պատկերազարդ), **ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ**	3	—
65.	**Աւգուստ Ռէյլ** (մանուաց առիթով), **Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ**		30
66.	**Ռոպերթ Նորագոյն Պատմութեան Մէջ, Հատոր Առաջին** (պատկերազարդ), **ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ**	4	—

ՆՈՐ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆԻ

I

Հայկական Շարժման Նախապատմութիւն

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Դիները երկու հատորի համար՝ 6 ֆրանկ, Թիւրքիա՝ 25 ղրշ., Ռուսաստան՝ 3 ռուբլի, Ամերիկա՝ 1 դոլար 25 ս.:

II

Բողոքը Նորագոյն Պատմութեան Մէջ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Դիները առաջին հատորի համար՝ 4 ֆրանկ, Թիւրքիա՝ 15 ղրշ., Ռուսաստան՝ 1 ռ. 50 կ., Ամերիկա՝ 80 ցենտ.:

Վերջին գրքի մէջ, բաղկացած 334 էջերից, հեղինակը զծում է զուգահեռաբար քաղաքական-ազգայնական եւ սոցիալական շարժումների ընթացքը Մեծ Յեղափոխութեան օրերից ի վեր, պատմելով եւ լուսաբանելով այդ շարժումները իրենց ծագման ու զարգացման մէջ: Առանձին ուշադրութեամբ ճկարագրուած են՝ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը եւ Իտալական Ազատամարտը: Ապա ի ցոյց են դրուած, իրենց գլխաւոր եւ յուզիչ դրւագներով, ապստամբական շարժումներ՝ Գերմանիայում, Յունաստանում, Լեհաստանում, Ռուսիայում, Ունգարիայում եւայլն: Յուցադրուած է, վերջապէս, սոցիալական-զաղափարային շարժման էւոլիւսիոնը Եւրոպայում, սկսած Բաբեօֆից մինչեւ առաջին Ինտերնացիոնալը:

Գիրքը զարդարուած է հեռեւեալ ճկարներով. — Ժան-Ժակ Ռուսսո, Ռոբեսպիէռ, Դանտօն, Մարա, Բաբեօֆ, Կեօրներ, Բիսսի ջարդ, Յուլիսեան բարրիկադը. Օգիւստ Բլանկի, Կոշուտ, Պրուդոն, Մարքս, Հերցեն, Զերնիշեվսկի, Կարբոնարիների ժողով, Մաձձինի եւ Գարիբալդի: